ԽՈՐԵՆԱՑՈՒ «ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՄԱՍԻՆ[1]

Պատմ. գիտ. դոկտոր Դ. Խ. ՍԱՐԳՍՅԱՆ

Խնդրո առարկա համակարգը Խորենացու «Պատմության» մեջ ներկայացված չէ առանձին ժամանակագրական աղյուսակի տեսքով, այլ սփռված է «Պատմության» երկրորդ ու երրորդ գրքերով մեկ (առաջին դիրքը դուրս է մնում համակարգից)՝ առանձին ժամանակագրական ցուցումների ձևով, որոնք փոխադարձաբար լրացնելով իրար, ստեղծում են մի ամբողջական պատկեր՝ չորս միմյանց սերտորեն համակցված զուգահեռ շարքերից (հայոց, պարսից և հռոմեացոց իշխողների և հայոց կաթողիկոսների) բաղկացած ժամանակագրական սինքրոնիկ տախտակ։

Խորենացու ժամանակագրական աղյուսակի վերականգնումը այդ մասերամասն ու սպառիչ ցուցումների հիման վրա չափազանց դյուրին գործ կլիներ, նթե դրանք բոլորը հասած լիներին մեզ անաղարտ վիճակում։ Իրականում, սակայն, դրանցից մի քանիսը մասնակի աղճատման են ենթարկվել դարերի ընթացքում՝ ձեռագրերի արտագրությունների ժամանակ։ Աղճատումները ի հայտ

---

[1] *Լ. Փ. Շահինյան, Պարսից Արշակունի հարստության հիմնադրման տարեթիվն ըստ Խորենացու, «Պատմա-բանասիրական հանդես», 1966, № 1, էջ 155—172։ Լ. Շահինյան, Ո՞րն է Խորենացու «Հայոց պատմության» ժամանակագրական համակարգը, «Բանբեր Մատենադարանի», № 8, 1967, էջ 21—56։*

Սույն հոդվածը «Պատմա-բանասիրական հանդեսի» խմբագրությանը հանձնելուց հետո (հանձնված է 1967 թ. ամռան) լույս տեսավ Լ. Փ. Շահինյանի երրորդ հոդվածը՝ «Նորից Մովսես Խորենացու «Հայոց պատմության» ժամանակագրության մասին» վերնագրով (ՊԲՀ, 1967, № 4, էջ 135—156), որն սկզբից մինչև վերջ նվիրված է մեր համապատասխան գրքի («Մովսես Խորենացու «Հայոց պատմության» ժամանակագրական համակարգը», Երևան, 1965) քննադատությանը։ Քանի որ այդ հոդվածը ներկա դրվածքի որևէ փոփոխման առիթ չի տալիս, իսկ ծավալուն պատասխանն էլ կվերածվեր վերոհիշյալ գրքի մի շարք էջերի վերարտադրման, ապա հղելով հետաքրքիր ընթերցողին այդ գրքին, այստեղ կբավարարվենք տողատակում տրվող երեք դիտողություններով, որոնց նպատակն է կողմնորոշել ընթերցողին և գերծ պահել նրան Լ. Շահինյանի կտրուկ պնդումներին անվերապահորեն հավատ ընծայելուց։

Որպես առաջին դիտողություն նշենք Շահինյանի վերջին և մեր ներկա հոդվածի բնույթների միջև եղած էական տարբերությունը։ Շահինյանի քննադատությունն ուղղված է ոչ թե Խորենացու համակարգի՝ մեր կատարած վերականգնմանը (ինչպես հակված է կարծելու ինքը), այլ միայն այդ վերականգնման հիման վրա առաջադրված մեկնաբանությանը։ Դա ունի իր պատճառները։ Շահինյանը համոզված է, որ իր նախորդ երկու հոդվածներում արդեն իրականացրել է Խորենացու ժամանակագրական համակարգի վերջնական ու անառարկելի վերականգնումը (տե՛ս «Բանբեր», էջ 54), որով ժխտվում են բոլոր մյուս վերականգնումները, և իր ողջ քննադատությունը կատարում է իր այդ վերականգնման պատվանդանից։ Մեր հոդվածը, ընդհակառակը, վերաբերում է Շահինյանի առաջարկած բուն վերականգնմանը, այսինքն նրա բոլոր մեկնաբանությունների, ինչպես և նրա արած քննադատական դիտողությունների հիմքին ու մեկնակետին։ (Մյուս երկու դիտողությունները տե՛ս ստորև, 128 և 144 էջերում)։

են գալիս այնու, որ աղճատված թվերը չեն տեղավորվում համակարգի սինքրոնիզմի մեջ· չեն բռնում Խորենացու իսկ հաղորդած՝ զուգահեռ կամ խաչավորվող մյուս թվական տվյալներին։ Բարերախտարար նման դեպքերը շատ չեն։ Աղյուսակի սինքրոնիզմը՝ ծառայելով աղճատումների բացահայտմանը, հիմք է դառնում նաև նրանց սրբագրման համար։ Սրբագրությանը նպաստում են նաև Խորենացու միջնադարյան հետևորդների հաղորդումները, որոնցում Խորենացու նախնական թվերը առանձին դեպքերում ավելի լավ են պահպանվել։

Խորենացու ժամանակագրական աղյուսակն ունի երկու կարևոր կողմ, որոնք պետք է բնութագրել։

Առաջին։ Խորենացու «Հայոց պատմության» ժամանակագրական սինքրոնիկ աղյուսակը ներքուստ կատարելապես ներդաշնակ է ու զուրկ ներքին հակասություններից։ Նրա բոլոր բացարձակ թվական տվյալները (դահատարիների քանակությունները) լրիվ համերաշխվում են նրա հարաբերական (սինքրոնիկ) թվական տվյալներին։ Չորս զուգահեռ շարքերից որ մեկով էլ հաշվելիս լինենք ժամանակը, հաշիվը և գումարները ճիշտ դուրս կգան նաև մյուս երեք շարքերի նկատմամբ։ Ահա այս հանգամանքների թելադրանքով է, որ Խորենացու ժամանակագրությունը անվանել ենք «համակարգ» (սիստեմ)։ Այս համակարգը, իր հերթին, ծայրեհծայր փոխհամաձայնեցված է «Հայոց պատմության» երկրորդ և երրորդ գրքերի բուն շարադրանքի հետ։ Աղյուսակը կազմում է շարադրանքի հենքն ու հիմքը։

Անկասկած է, ուրեմն, որ այն հետազոտողը, որը ինչ-ինչ նկատառումներով մտադրվում է շարունակել աղյուսակի վերականգնման գործը, առաջին հերթին պետք է հոգ տանի այն մասին, որ իր վերականգնած համակարգը սկզբից մինչև վերջ համերաշխ մնա Խորենացու բուն շարադրանքի հետ, այսինքն պետք է առաջնորդվի «Խորենացուն պետք է հենց իրենով ստուգել» վաղուց արդեն քաղաքացիության իրավունք ձեռք բերած նշանաբանով։ Նշենք, որ քննարկման տոարկա հոդվածների հեղինակ Լ. Շահինյանը բազմիցս նույն այդ միտքն է արտահայտում։

Երկրորդ։ Ներքուստ միանգամայն ներդաշնակ ու անթերի լինելով հանդերձ, Խորենացու ժամանակագրությունը իր որոշ հատվածներում էական շեղումներ է ցուցաբերում համաշխարհային պատմության՝ գիտության մեջ ընդունված ժամանակագրությունից։ Նշենք դրանցից երեք ամենակարևորները։

Ա) Խորենացու ժամանակագրության մեջ պարսից և հռոմեական իշխողների համադրման գործում գոյություն ունի լուրջ անաքրոնիզմ (անժամանակություն)։ պարսկական և հռոմեական շարքերը միմյանց նկատմամբ տեղաշարժված են իրենց ամբողջ երկարությամբ, հենց Սասանյանների շարքի սկզբնակետից, որը, փոխանակ համընկնելու կայսր Ալեքսանդր Սեվերոսի (222—235 թթ.) առաջին տարիներին, հանդիպում է կայսր Փիլիպոս Արաբի (244—249 թթ.) իշխանության ժամանակին։ Այդ տեղաշարժը մի ենթահամակարգ է կազմում Խորենացու ժամանակագրական համակարգի մեջ՝ և շրջակման միանգամայն անենթակա է, քանի որ դրա «շտկումը» կհանգեցներ Խորե-

2 Տե՛ս Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երևան, 1940, էջ 351 (թարգմ. Ստ. Մալխասյանի, Հավելված։ Սինխրոնիկ աղյուսակներ Խորենացու պատմության Բ և Գ գրքերի համար)։

նացու ողջ ժամանակագրական համակարգի խեղման։ Հետազոտողին մնում է միայն փորձ անել բացատրելու, մեկնաբանելու այս անաքրոնիզմը, որոնելու նրա պատճառները և այլն։

Բ) Հռոմեական կայսրների շարանը՝ սկսած առաջին իսկ կայսրից Օգոստոսից, ինքնուրույն վերցրած (այսինքն՝ վերանալով պարսից շարքի նկատմամբ դրսևորվող վերը նշված անաքրոնիզմից), Խորենացու մոտ հանդես է գալիս ստույգ-պատմական ժամանակագրության հետ միանգամայն համերաշխ[3], շուրջ չորս հարյուրամյակի ընթացքում տալով միայն 2—3 տարվա շեղում, որը կարելի է անտեսել։ Այսպիսին է վիճակը, սակայն, միայն մինչև Թեոդոս Մեծի ժամանակը (379—395 թթ.)։ Վերջինիս Խորենացին, հանկարծ խախտելով հռոմեական շարքի համաչափ ընթացքը, նրա թագավորած 10 տարվա փոխարեն տալիս է շուրջ 25 տարի[4], որով, բնական է, տեղաշարժվում է հռոմեական շարքի հաջորդ հատվածը՝ մինչև աղյուսակի վերջը։ Այս շեղումը ևս, նախորդի նման, հնարավոր չէ «շտկել» առանց վթարի մատնելու Խորենացու համակարգը և բուն շարադրանքը։

Գ) Երրորդ շեղումը հարկ է ավելի մանրամասն բնութագրել։ Այն գտնվում է ժամանակագրության հակառակ ծայրում՝ նրա սկզբնական հատվածում։ Խորենացու ժամանակագրությունն սկսվում է Սելևկոս Ա-ի գահակալման ըսկզբնատարուց, որը, ստույգ պատմական ժամանակագրությամբ, մ. թ. ա. 312/311 թ. է[5]։ Քրիստոսի ծննդյան տարեթիվը ըստ Խորենացու համընկնում է Հայոց Արգար թագավորի իշխանության 2-րդ տարվա հետ։ Սպասելի էր, որ Խորենացու ժամանակագրության մեջ այդ երկու տարեթվերի միջև ընկած ժամանակահատվածը կկազմի 311 կամ 312 տարի։ Սակայն իրականում այդպես չէ։ Այդ ընթացքում իշխած թագավորների գահատարիների գումարը, ըստ Խորենացու «Պատմության» մեջ պահպանված թվերի, մոտ 40 տարով պակաս է վերոհիշյալ թվից։ Ուրիշ խոսքով, այս շեղումն իր բնույթով նման է նախորդին, միայն հակառակ, մինուս նշանով։ Եթե այնտեղ, ժամանակագրության վերջին հատվածում, տարիների ավելցուկ է առաջանում, ապա այստեղ՝ ժամանակագրության սկզբնական հատվածում՝ ընդհակառակը, տարիների պակաս կա։ Այս շեղումը ևս չի հակասում համակարգին, չի խախտում նրա ներքին ներդաշնակությունը։

Այսուհանդերձ այն միանգամայն այլ վերաբերմունքի է արժանացել Խորենացու ժամանակագրությամբ զբաղվողների կողմից, քան նախորդ երկուսը։ Եթե նրանք ի գիտություն են ընդունվել, ապա այս մեկը ենթարկվել է շրջկման, սրբագրման մի շարք փորձերի։ Այդ փորձերին ելակետ է ծառայել հետազոտողների այն կարծիքը, թե սույն շեղումը չի կազմում համակարգի օրգանական մասը, այլ հանդիսանում է պատմահոր նախապես անշեղ տվյալների հետագա աղճատման արդյունք, որը ենթակա է սրբագրման։ Փորձերը ուղղվա՝ են նպել Խորենացու ժամանակագրությունը ստույգ պատմական ժամանակա-

---

3 Տե՛ս Գ. Խ. Մարգսյան, Մովսես Խորենացու «Հայոց պատմության» ժամանակագրական համակարգը, Երևան, 1965, էջ 57, 59 և 5-րդ աղյուսակը։

4 Հմմտ. Լ. Շահինյան, «Բանբեր Մատենադարանի», № 8, 1967, էջ 49։

5 Սելևկոսի թագավորության սկզբնատարին, որը սելևկյան տոմարի սկզբնակետն է, սկսվում է մ. թ. ա. 312 թ. հոկտեմբերից, այսինքն առաջին տարվա մեծ մասը ընկնում է հաջորդ՝ 311 թ. վրա։ Ուստի հանդիպելով առաջիկա շարադրանքում 312/311 թթ., 312 թ. կամ 311 թ., ընթերցողը պետք է այդ բոլորը ընկալի մեկ իմաստով՝ իբրև սելևկյան էրայի սկզբնատարի։

գրությանը մոտեցնելուն՝ այն ակնկալությամբ, որ այդպիսով կվերականգնվեն Խորենացու նախնական ճշգրիտ տվյալները։

Այդ փորձերը, մեկ բացառությամբ (որը ստորև մանրամասն կքննարկվի, բանի որ Լ. Շահինյանն այն որդեգրել է), կատարվել են, բնականաբար, Խորենացու աղյուսակի սկզբնական հատվածում, որը ընդհուպ մինչև երրորդ պարթև թագավորը միաշար է, չունի սինքրոնիկ զուգահեռ շարքեր, որոնք կկաշկանդեին սրբագրողի ձեռքը սինքրոնիզմի խախտման սպառնալիքով։

Լ. Շահինյանը իր վերոհիշյալ հոդվածներում մի նոր, հերթական փորձ է անում շտկելու Խորենացու ժամանակագրության՝ վերը բնութագրված շեղումներից երրորդը՝ այդ ժամանակագրության Քրիստոսի ծննդյանը նախորդող հատվածի տևողությունը ստույգ պատմական ժամանակագրության համապատասխան հատվածին հավասարեցնելու միջոցով։ Նրա հիմնական առաջարկները երեքն են, որոնցից առաջինը ժառանգված է Սեն-Մարտենից, մյուսները նոր են։ Ահա այդ առաջարկները։

ա. Պարթևական չորրորդ իշխողին՝ Արշականին, տալ 50 տարի՝ Խորենացու մոտ պահպանված 30 տարվա փոխարեն։

բ. Պարթևական առաջին և երկրորդ իշխողներին՝ Արշակ Քաջին և Արտաշեսին, Խորենացու «Պատմության» մեջ պահպանված 31 և 26 տարիների փոխարեն տալ համապատասխանաբար 57 և 31 տարի, ինչպես որ ունի Խորենացու հետևորդներից Ասողիկը։

գ. Խորենացու ժամանակագրության սկզբնատարի համարել մ. թ. ա. 322 թ.՝ Ալեքսանդր Մակեդոնացու մահվանը հաջորդող տարին, մինչ այժմ հայագիտության մեջ ընդունված մ. թ. ա. 312/311 թ. փոխարեն։

Եթե երեք այս առաջարկներն էլ ընդունելի համարվեն, ապա Խորենացու ժամանակագրության՝ Քրիստոսի ծննդյան տարեթվից այն կողմն ընկած հատվածի տևողությունը հանում է 322 տարվա, այսինքն այնքան տարիների, որքան, ըստ իրական ժամանակագրության, ընկած է Ալեքսանդր Մակեդոնացու մահվան տարեթվի (որը, ըստ Շահինյանի, Խորենացու ժամանակագրության սկզբնակետն է) և Քրիստոսի ծննդյան տարեթվի միջև։ Եվ, քանի որ, ինչպես վերը նշվեց, Խորենացու ժամանակագրությունը Քրիստոսի ծննդից այս կողմ՝ մինչև IV դարի վերջերը հռոմեական գծով ստույգ-պատմական է, ապա, բնականաբար, ստացվում է ստույգ պատմական հանրագումար արդեն մ. թ. ա. 322 թ. և մ. թ. IV դարի վերջի միջև[6]։

Ինչ խոսք, նպատակը բարի է և վերականգնումից սպասվող արդյունքը՝ դայթակղեցուցիչ։ Սակայն անհրաժեշտ է, որ վերականգնված համակարգը սլացիկ ու գայթակղեցուցիչ լինելու հետ մեկտեղ լինի նաև Խորենացուը, այսինքն խստորեն համապատասխանի նրա «Հայոց պատմության» բոլոր տվյալներին։ Այլապես այդ համակարգը իր բոլոր բարեմասնություններով հանդերձ կմնա սոսկ վերականգնողի սեփականություն։

6 Պետք է նշել, որ մասամբ նույն և մասամբ այլ միջոցներով (որոնց մասին հետագայում ոեռ կասվի) նմանօրինակ արդյունքի, այսինքն՝ ստույգ պատմական հանրագումարի է հասել Շահինյանից առաջ Թ. Ավգալրեգյանը (Լ. Շահինյանը հիշատակում է այդ հանգամանքը) իր «Խորենացու «Պատմության» ժամանակարանական սկզբնագիրը վերականգնելու նոր փորձ» («Պատմա-բանասիրական հանդես», 1964, № 4, էջ 206—212) աշխատության մեջ, այն տարբերությամբ, որ նրա մոտ Խորենացու ժամանակագրության սկզբնակետը մ. թ. ա. 312 թ. է։ Թ. Ավգալրեգյանի փորձի քննարկումը տե՛ս Գ. Սարգսյան, Մովսես Խորենացու «Հայոց պատմության» ժամանակագրական համակարգը, էջ 164 և հտ.։

Առաջին առաջարկը, ինչպես նշվեց, այն է, որ պարթևների չորրորդ իշխող Արշականին Խորենացու տեքստում պահպանված 30 տարվա փոխարեն տրվի 50 տարի։

Փորձենք ընթերցողի հետ միասին անաչառ, առանց 20 տարի շահելու ակնկալության, քննարկել առկա բոլոր տվյալները և գալ որոշակի եզրակացության։

Խորենացու տվյալները սրանք են.

Պարթև Արշականը թագավորել է 30 տարի։

Սրան հաջորդել է Արշանակը՝ 32 տարի[7]։

Սրան հաջորդել է Արշեղը (տարբերթերց.՝ Արտաշեղը)՝ 20 տարի։

Արշականի 24-րդ տարում դահ է բարձրացել հայոց Արտաշեսը և թագավորել է 25 տարի։

Արշականի 49-րդ տարում (տարբերթերց.՝ Արշանակի 19-րդ տարում)[8] դահ է բարձրացել հայոց Տիգրանը՝ Արտաշեսի որդին, և թագավորել է 33 տարի։

Տիգրանը իր մահվանից երեք (տարբերթերց.՝ երկու) տարի առաջ, պարթևների թագավոր Արշեղի (տարբերթերց.՝ Արտաշեղի) հետ արշավանք է կազմակերպել դեպի Պաղեստին։

Տիգրանին հաջորդել է Արտավազդը։

Աղյուսակ կազմելու համար թվերը լիովին բավական են, բայց նախապես ընտրություն պիտի կատարել հետևյալ երկու տարբերթերցվածների միջև՝ Արշականի 49-րդ տարի, Արշանակի 19-րդ տարի։ Լ. Շահինյանը նախընտրում է առաջինը։ Գնանք այդ ընտրության հետքերով։ Առաջին դժվարությունը, որ ծագում է, այն է, որ ըստ Խորենացու Արշական թագավորել է միայն 30 տարի, ուրեմն և չի կարող ունենալ 49-րդ տարի։ Այս 30 թիվը Խորենացու մոտ ոչ մի տարբերթերցում չունի և կրկնվում է նրա միջնադարյան հետևորդների մոտ, այդ թվում և Ասողիկի, որոշ հեղինակների մոտ դառնալով 31 (տե՛ս Լ. Շահինյանի կազմած համեմատական աղյուսակը՝ էջ 36-ին կից)։ Ուրեմն հենց առաջին քայլից պիտի հրաժարվենք հաստատուն թվից՝ հօգուտ տարբերթերցվածի։ Պայմանականորեն հրաժարվենք։ Այժմ նոր խնդիր է ծագում. եթե Արշականը ըստ Խորենացու 30 տարի չի թագավորել, ապա քանի տարի է թագավորել։ Լ. Շահինյանը առաջարկում է՝ 50. բայց ինչո՞ւ անպայման՝ 50։ Մենք գիտենք միայն, որ նա ունեցել է 49-րդ տարի։ Նա կարող է մահացած լինել հենց այդ տարում, կամ հաջորդ տարում, կամ 5, 10, 15, 20 տարի հետո և իշխած լինել համապատասխանաբար 49, 50, 55, 60, 65 կամ 70 տարի։ Լ (30) նիշը շատ ավելի նման ու շփոթելի է, ասենք, Կ (60) կամ մանավանդ Հ (70) նիշի հետ, քան Ծ (50)-ի, ուրեմն հնագրությունը սրանց օգտին է խոսում։ Իսկ այդ թվերի մեծությունը մեկ չի կարող կասկած ներշընչել, քանի որ նույն Խորենացու մոտ ունենք 56 տարի (Տրդատի համար) և 70 տարի (Շապուհ Բ-ի համար)։ Աղյուսակի սինքրոնիզմն էլ անհրաժեշտ թվի ընտրության գործում մեկ ոչինչ չի հուշում, ձեռքներս ազատ են, ուստի այդ ընտրությունը դառնում է սոսկ ճաշակի խնդիր։ Լ. Շահինյանը, ըստ իր ճա-

---

7 Խորենացու մոտ՝ 31, սակայն բոլոր ուսումնասիրողները, այդ թվում և Լ. Շահինյանը, համաձայն են, որ այդ պետք է սրբագրվի և դարձվի 32։

8 Կա և «29-րդ» տարբերթերցվածը, սակայն դա ակներևաբար «49-րդի» տարբերակն է (Խ և Ի նիշերի շփոթման հետևանքով)։

չակի, կամ հետևելով իր նախորդների ճաշակին, ընտրում է 50։ Պայմանակոնորեն ընդունենք նաև այս և աղյուսակ կազմենք։

Արշական (50)	
24-րդ տարի	Արտաշես (25)
49-րդ տարի	Տիգրան (33)
50-րդ տարի	2-րդ տարի
Արշանակ (32)	3-րդ տարի
28 կամ 29-րդ տարի	30 կամ 31-րդ տարի՝ Տիգրանի և պարթևաց թագավոր Արշեղի (Արտաշեղի) համատեղ արշավանքը՝ Պաղեստին, որից 5 (տարընթերց.՝ 2) տարի անց՝ Տիգրանի մահը։
31-րդ տարի	33-րդ տարի
32-րդ տարի	Արտավազդ
Արշեղ (50)	2-րդ տարի

Այս աղյուսակը իր սինքրոնիզմով լիովին հարազատ է Լ. Շահինյանի կազմած համաժամանակյա աղյուսակի համապատասխան (Արշական-Արշեղ) հատվածին, միայն քիչ ավելի մանրամասն է։ Մասնավորապես, այստեղ առկա է Տիգրանի և Արշեղի (Արտաշեղի) ժամանակակցության մասին Խորենացու ցուցումը, որի մասին Լ. Շահինյանը չի հայտնել ընթերցողին ո՛չ նշված աղյուսակում, ո՛չ էլ հոդվածի տեքստում, և որը հենց զրկում է այդ աղյուսակը գոյության իրավունքից։ Խորենացու «Պատմության» երկրորդ գրքի ԺԹ գլուխն ունի այսպիսի վերնագիր. «Յաղագս միաբանութեանն Տիգրանայ և Արտաշիկի (տարընթերց.՝ Արշէզի), և առաքել ասպատակ ի Պաղեստինէ...»։ Գլխում երիցս հիշատակվում են Տիգրանն ու Արտաշէզը (Արշէզը) որպես գործակիցներ, որից հետո նկարագրվում է համատեղ կազմակերպված արշավանքի ավարտը։ Սրանից հետո Խորենացին եզրափակում է գլուխը. «Եւ Տիգրանայ ոչ աւելի բաւական քան զերեսամ (տարընթերց.՝ զերկեսամ) յետ այնորիկ՝ վախճանի, թագաւորեալ ամս երեսուն և երիս»։

Այսպիսով, եթե ըստ Շահինյանի կազմած աղյուսակի Տիգրանը մահացել է Արշեղ-Արտաշեղի թագակալումից առաջ, դեռևս պարթևների արքա Արշանակի օրոք, ապա Խորենացին մի ամբողջ գլուխ է նվիրել Տիգրանի և Արշեղ-Արտաշեղի ժամանակակցության և համատեղ գործողությունների նկարագրմանը, ըստ որում ստուգորեն նշել է նաև, որ Տիգրանը մահացել է այդ գործողություններից երեք (տարընթերց.՝ երկու) տարի անց[9]։ Ուրեմն, Լ. Շահինյանի կազմած աղյուսակը արդարացնելու համար ստիպված պիտի լինենք այդ ամբողջ գլուխը ջնջել Խորենացու «Պատմությունից»։ Արդյոք չափազանց չէ՞ այս զոհաբերությունը և ավելի լավ չէ՞ պարզապես հրաժարվել աղյուսակից։

Պետք էր կարծել, որ Լ. Շահինյանի աչքից վրիպել են Խորենացու վերոհիշյալ տվյալները։ Դրան, սակայն, խանգարում է մի հանգամանք, որից հետևում է, որ Շահինյանը նկատել է դրանք և ելք փնտրել ստեղծված անհուսալի վիճակից։ Իր ներդիր աղյուսակներից առաջինում (որը պարթև արքա-

9 Վերջին հանգամանքը արդեն մի անգամ մատնանշվել է Թ. Ավգալբեկյանի աշխատության քննարկման կապակցությամբ. տե՛ս Գ. Խ. Սարգսյան. նշվ. աշխ., էջ 167 և հտ.

ների ցանկի տարբերակներն է պարունակում) «Արշանակ» անվան դիմաց, որպես նրա տարատեսակ, նա մանրատառ գրել է նաև «Արշեգ», ջանալով ներշնչել դիտես ինքն իրեն, թե ընթերցողին, իբրև թե Արշանակը այդպես էլ է կոչվել և թե Տիգրանի դաշնակից Արշեգը իրական Արշեգը չէ, այլ Արշանակը, որովհետև իր կազմած աղյուսակի համաձայն հենց սա պիտի լինի Տիգրանի ժամանակակիցը։

Խորենացու երկի՝ Լ. Շահինյանի կազմած աղյուսակին հարմարեցման այս դեպքը, անշուշտ, հոյակապ ցուցադրումն է նրա այն խոսքերի, թե Խորենացու «Հայոց պատմության» ժամանակագրության վերականգնման ամեն մի փորձ պետք է քննություն բռնի նրա շարադրած պատմությամբ...», և մի տող հետո՝ թե «...մեր կազմած ժամանակագրական աղյուսակն ամբողջությամբ քննություն է բռնում նաև այս դեպքում...» (էջ 51)։

Այժմ կազմենք մի նոր աղյուսակ, հիմք ընդունելով «Արշանակի 19-րդ տարի» տարբերթերցվածը։ Նախապես նշենք, որ «Արշականի 49-րդ տարի» տարբերթերցվածը ըստ էության չի հակասում «Արշանակի 19-րդ»-ին, որովհետև Արշանակի 19-րդ տարին հենց համընկնում է Արշականի 49-րդ տարվան, եթե մեկը ցանկություն ունենա հաշվելու ժամանակը, ելնելով Արշականի դահակալման տարվանից (Արշական՝ 30 + Արշանակի 19 = 49)[10]։ Ուստի «Արշականի 49-րդ» տարբերթերցվածը նույնիսկ կարելի է զուգահեռաբար դետեղել առաջիկա աղյուսակի մեջ։

Արշական (30)	
24-րդ տարի	Արտաշես (25)
30-րդ տարի	7-րդ տարի
Արշանակ (32)	8-րդ տարի
18-րդ տարի	25-րդ տարի
19-րդ տարի (կամ՝ Արշականի 49-րդ տարի)	Տիգրան (33)
32-րդ տարի	14-րդ տարի
Արշեգ (20)	15-րդ տարի
6 կամ 7-րդ տարի	30 կամ 31-րդ տարի՝ Տիգրանի և պարթևաց թագավոր Արշեգի (Արտաշեգի) համատեղ արշավանքը Պաղեստին, որից 3 (տարբերթերց.՝ 2) տարի անց՝ Տիգրանի մահը։
19-րդ տարի	33-րդ տարի
20-րդ տարի	Արտավազդ

Այս աղյուսակը ոչ մի կետում չի հակասում Խորենացու հաղորդած սինքրոնիզմներին և, ընդհանրապես, նրա շարադրած փաստերին։ Շահինյանի խոսքով ասած՝ այն «քննություն է բռնում Խորենացու շարադրած պատմությամբ», ուստի և միակ ընդունելին է։

10 Այս հանգամանքը հենց մատնացույց է անում, թե ինչ ուղիով է տեղի ունեցել աղճատումը։ Հմմտ. К. Патканов, Материалы для армянского словаря, II, СПб, 1884, էջ 54։ Հմմտ. նույնպես Ուխտանեսի և Ասողիկի համապատասխան տվյալները։

Սակայն գործը սրանով չի ավարտվում, Չէ՞ որ Խորենացու ժամանակագրական համակարգը այնպիսին է, որ հնարավոր չէ փոփոխել շարքերից մեկը, առանց արտահայտելու նույն այդ փոփոխությունը մյուս զուգահեռ շարքերի մեջ։ Նույնը և այս դեպքում։ Պարթև Արշականի գահատարիների երկարացումը 20 տարով (30-ի փոխարեն՝ 50)՝ 20 տարվա պակաս է առաջացնում հայոց թագավորների շարքում։ Ահա այս պարզ ու հասկանալի երևույթը հոդվածի 41—43 էջերում մատուցված է այնպես, որ ընթերցողին կթվա, թե 20 տարվա այս պակասը բխում է Խորենացու իսկ տվյալներից, նրա համակարգից։ Այնինչ այդ պակասը հենց ինքը՝ Լ. Շահինյանն է առաջացրել իր նախորդ գործողություններով, արհեստականորեն ավելացնելով պարթևական շարքում 20 տարի։ Եթե 20-ի փոխարեն նա ավելացներ 30 կամ 40 տարի (այսինքն Արշականին կամայաբար տրված 50 տարվա փոխարեն տար 60 կամ 70 տարի), ապա հայկական շարքում էլ համապատասխանաբար կստեղծվեր 30 կամ 40 տարվա պակաս, իսկ եթե ոչինչ չավելացներ (այսինքն թողներ Արշականին իր օրինական 30 տարին), ապա և ոչ մի պակաս էլ չէր ստեղծվի։

Այսպիսով, պարզվում է, որ այս առաջին առաջարկը անընդունելի է անկախ այն բանից, թե ինչպես կտեղադրվի հիշյալ քսան տարին հայկական շարքում։ Ինչպես էլ տեղադրվի՝ սխալ կլինի, որովհետև ինքը այդ պակասը գոյություն չունի, արհեստականորեն է ստեղծված։

Սակայն շարունակենք դեռ քննությունը, որովհետև այս խնդիրը զուգադիպում է մի այլ, արդեն իրապես գոյություն ունեցող խնդրի, որը Տիգրանի որդի Արտավազդի գահատարիների խնդիրն է՝ Խորենացու ժամանակագրության մեջ։ Հարցն այն է, որ Արտավազդի համար Խորենացու մոտ բացառության կարգով գահատարիներ չեն նշված, թեև պատմահոր պատմածը նրա մասին ցույց է տալիս, որ Արտավազդը օրեր չէ, որ իշխել է (II, ԻԲ, ԻԳ)։ Խորենացու միջնադարյան որոշ հետևորդներ տալիս են Արտավազդին 2 տարի, որ կարող է հարցի լուծման ուղեցույց հանդիսանալ։

Բայց այս ուղին չի գրավում Լ. Շահինյանին, որը փորձում է, Թ. Ավդալբեգյանի հետքերով, Արտավազդի գահատարիների խնդիրը լուծել ի հաշիվ վերոհիշյալ 20 տարվա «պակասի»։ Սակայն, եթե Թ. Ավդալբեգյանը դեռ ապավինում էր հարցի հնագրական հիմնավորմանը և, այդ 20 տարին ամբողջությամբ Արտավազդին վերագրելով, միևնույն ժամանակ հենվում էր Խորենացու հետևորդների՝ պահպանած 2 թվանշանի վրա (նա ենթադրում էր, որ Բ-ն [2] ստացվել է Ի-ի [20] աղճատման ճանապարհով), ապա Լ. Շահինյանը լքում է այս նվազագույն հիմնավորումն էլ, գտնելով, որ հիշյալ 20 տարիներից Արտավազդին պետք է տալ «առաջին 7-ը կամ ամենաշատը 10-ը տարին (մենք ընտրում ենք վերջինը [սրանք ևս Շահինյանի խոսքերն են]), իսկ մնացած 13 կամ 10-ը տարին՝ անիշխանություն» (էջ 43)։

Ինչո՞ւ «7», ինչո՞ւ «ամենաշատը՝ 10», ինչո՞ւ է «ընտրում վերջինը», ինչո՞ւ «13 կամ 10»։ Պատասխան չկա, որովհետև ընտրության հիմքը նորից ենթադրական ճաշակն է[11]։

---

11 Բաժանման աստառը, սակայն, պարզ է։ Շահինյանի կազմած աղյուսակի առումով ձեռնտու չէ 20 տարին էլ Արտավազդին վերագրել, որովհետև այդ դեպքում վերջինիս վախճանը (դերեվարումը) կտեղադրվեր իր օրինական ժամանակից՝ մ. թ. ա. 34 թ. շատ ու շատ հետո՝ մ. թ. ա. 22 թ. և հեղինակը ջանում է որքան կարող է կրճատել այդ տարածությունը։

Վերջապես, այս ի՞նչ «անիշխանություն» է։ «Այս ենթադրությունն էլ,— գրում է Լ. Շահինյանը,—արվում է Արտավազդի գերության մասին Խորենացու, Սարաբոնի, Հովսեփ Եբրայեցու, Տակիտոսի, Պլուտարքոսի և ուրիշ հեղինակների վկայությունների հիման վրա» (էջ 43)։

Սա սոսկ վերացական դատողություն է, որը ոչ մի խարիսխ չունի Խորենացու տվյալների մեջ։ Հիրավի, Խորենացու մոտ թագավորների գերության դեպքերը բազմաթիվ են, բայց նրանք ամենևին անհրաժեշտաբար չեն հանդեցնում անիշխանության[12]։ Մյուս կողմից, երբ պատմահայրը անիշխանության դեպքերն է նկարագրում, ապա նա խնամքով տեղադրում է դրանք իր ժամանակագրական համակարգում, նշելով դրանց տևողությունը՝ տարիներով (տե՛ս երկրորդ գրքի ՀԵ — ՁԱ գլուխները, երրորդ գրքի ԾԵ գլուխը)։ Լ. Շահինյանի հիշատակած «անիշխանության» մասին ոչ մի խոսք չկա Խորենացու մոտ, այնպես որ նրա կազմած աղյուսակն արդարացնելու համար այս անգամ էլ ստիպված կլինեինք մի նոր գլուխ հորինել ի հավելումն «Հայոց պատմության»։

Բայց այստեղ թեթև ակնարկ է նետվում նաև անտիկ հեղինակների մասին։ Թեև այն շատ մակերեսային է, բայց ինքը՝ նյութը պահանջում է լրջորեն քննարկել այն հարցը, թե ինչ են հաղորդել անտիկ հեղինակները Արտավազդի մասին Խորենացուն, թե ինչպես է արձագանքել Խորենացին այդ հաղորդումներին, և ինչ նշանակություն ունի այդ բոլորը Արտավազդի գահատարիքը որոշելու խնդրում։

Այս խնդրի քննությունը, սակայն, տեղի սղության պատճառով, դուրս ենք բերել սույն հոդվածից և ներկայացրել առանձին[13]։ Այստեղ նշենք միայն, որ նյութի մանրամասն քննարկումը հանգեցրել է այն հաստատուն եզրակացության, որ ըստ Խորենացու Արտավազդը իշխել է ամենաշատը 2—3 տարի, և նրա թագավորությանը անիշխանության տարիներ չեն հաջորդել։

Այսպիսով, առաջարկված 20-ամյա հավելումը, որը, ինչպես տեսանք չպատվաստվեց պարթևական շարքի վրա, այժմ էլ մերժվում է հայկական շարքի կողմից. համակարգը դուրս է մղում այն, որպես անհարազատ և պարտադրված տարր։

Ավարտելով Լ. Շահինյանի այս առաջարկի քննությունը, կարելի էր, ըստ էության, վերջակետ դնել, քանի որ այն հիմնական հարցին, թե «ո՞րն է Խորենացու «Պատմության» ժամանակագրական համակարգը»՝ արդեն որոշակի պատասխան է տրված. Խորենացու «Պատմության» ժամանակագրական համակարգը այն չէ, որը վերականգնել է Լ. Շահինյանը։

Հիրավի, երբ ձախողվում է պարթևաց Արշականի և հայոց Արտավազդի հաշվին Խորենացու ժամանակագրությունը երկու տասնյակ տարիներով երկարացնելու փորձը, ապա, նույնիսկ Շահինյանի մնացած առաջարկները ան-

12 Օրինակ, Խորենացին պատմում է Շապուհ Բ-ի կողմից Պարսկաստանում Արշակ թագավորին բանտարկելու մասին, բայց իր ժամանակագրության մեջ Արշակի և Պապի միջև անիշխանության ժամանակ չի թողնում (տե՛ս թեկուզ Լ. Շահինյանի կազմած աղյուսակը), թեև այդպիսին, ըստ երևույթին իրականում եղել է։ Ինքը՝ Պապը, ըստ Խորենացու, գերեվարվում է Բյուզանդիոն, բայց նրա և իր հաջորդ Վարազդատի միջև ևս անիշխանության ժամանակ չկա Խորենացու ժամանակագրության մեջ։ Չկա այն նույնպես Վարազդատից հետո, որը ևս գերեվարվում է և այլն, և այլն։

13 Տե՛ս Գ. Սարգսյան, Տիգրան Բ-ի և Արտավազդ Բ-ի գահատարիների քանակը ըստ Խորենացու, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1967, № 12։

վերապահորեն ընդունելու դեպքում, ստացվում է հետևյալ պատկերը. Ալեքսանդր Մակեդոնացու մահվան տարին, ըստ Շահինյանի՝ Խորենացու ժամանակագրության սկզբնակետը, իր օրինական մ. թ. ա. 323 թ. փոխարեն ընկնում է մ. թ. ա. 305 թ. վրա. այդ՝ եթե ելակետ ընդունվի Քրիստոսի ծննդյան տարեթիվը։ Իսկ եթե, այնուամենայնիվ, ելակետ ընդունվի մ. թ. ա. 323 թ., ապա այդ դեպքում Քրիստոսի ծննդյան տարեթիվն է տեղաշարժվում, ընկնում է մ. թ. ա. 18 թ. վրա։

Այդ վիճակը արտահայտված է հետևյալ աղյուսակում.

	մ. թ. ա.	մ. թ. ա.
Ալեքսանդրի մահը	305	323
. . . . .	—	—
Տիգրան (33)	56	74
Արտավազդ (2)	23	41
Արշամ (20)	21	39
Արգար (38)	1	19
Քրիստոսի ծնունդը		

Կճանաչի՞ արդյոք Լ. Շահինյանը այս երկփեղկ պատկերի մեջ իր համակարգը։ Երևի՝ ոչ, մանավանդ որ ստեղծվել է այն «անիծյալ» վիճակը, երբ, ըստ այս ժամանակագրության, միևնույն իրադարձությունը երկու տարբեր թվերով է թվագրվում, նայած թե որ ծայրից հաշվենք, ստացվում է, ասենք, որ Տիգրանի գահակալման տարին միաժամանակ և մ. թ. ա. 74 թ. է (եթե իջնենք Մակեդոնացու մահվան տարեթվից), և մ. թ. ա. 56 թ. (եթե բարձրանանք Քրիստոսի ծննդյան տարեթվից)։ Կճանաչի թե ոչ՝ բայց սա է այն ամենը, ինչ առայժմ մնում է նրա համակարգից[14]։

[14] Այստեղ տեղին է անել երկրորդ դիտողությունը (առաջինը տե՛ս վերը, էջ 119) Լ. Շահինյանի՝ մեր դրքի կապակցությամբ ծավալած քննադատության մասին։ Իր հոդվածի 22 էջերից 19-ը նա նվիրել է ընդամենը մեկ հարցի, այն է, թե գրքում Խորենացուն մեկի փոխարեն երեք ժամանակագրական համակարգ է վերագրված (ուստի և միևնույն իրադարձությունը ըստ Խորենացու թվագրվում է երեք տարբեր թվականներով, որ անհրեակայելի է) և թե այդ համակարգերից և ոչ մեկը իսկապես Խորենացունը չէ։

Շահինյանն այստեղ և՛ իրավացի է, և՛ ոչ... ինչպես ինքն է սիրում ասել։ Խորենացին, իհարկե, ընդամենը մեկ ժամանակագրական համակարգ է ունեցել, բայց չմոռանանք, որ նրա համակարգը կերտված է միայն ու միայն արքաների դահատարիներն ու նրանց սինքրոնիզմը արտահայտող տվյալներից, և որ Խորենացին չի տալիս ոչ մի բացարձակ թվագրություն, ասենք, Արրահամի էրայով, օլիմպիադներով կամ մի այլ թվականությամբ, որը հնար կտար մեզ որոշակիորեն տեղագրելու նրա համակարգը ամբողջությամբ վերցրած՝ համաշխարհային պատմության ընդհանուր ժամանակագրական տախտակի վրա։ Այս պարագաներում ամեն մի նման տեղադրում անխուսափելիորեն դառնում է Խորենացու համակարգը մեկնություն։ Խորենացու համակարգը բազմաթիվ նման մեկնությունների հնարավորություններ է ընձեռում։ Հենց նոր համոզվեցինք, որ Շահինյանի առաջադրած «համակարգը» երկփեղկվում է, վերածվում երկու «համակարգի» (Շահինյանի տերմինաբանությամբ) և յուրաքանչյուր իրողությունն սկսում է թվագրվել երկու տարբեր թվականներով։

Նման «համակարգերի» թիվը կարելի է ավելացնել։ Խորենացու մոտ կարդում ենք. «Յերեսուն ամի Որմզդի Պարսից արքայի և յութերորդ ամի ինքնակալութեանն Կոստանդեայ, յոգնականութենէ նորին Թագաւորեաց Խոսրով» (III, Ը)։ Խոսրով Կոտակն, ուրեմն, այս ցուցման համաձայն, գահ է բարձրացել պարսից Որմիզդ թագավորի (302—309 թթ., տե՛ս ցանկացած դասագիրքը) իշխանության 2-րդ տարում, այսինքն 303 թ., բայց և ըստ նույն ցուցման, Կոստանդիոս Բ կայսեր (337—361 թթ., տե՛ս նույն դասագրքերը) 6-րդ տարում, այսինքն՝ 344 թ.։ Ուրեմն, այնուամենայնիվ, ե՞րբ։ 303-ի՞ն, թե՞ 344-ին։ Եթե ընդունենք առաջինը, ապա Խորենացու ողջ

Ապագա պարզաբանումների անհրաժեշտությունը կանխելու նպատակով նշենք, որ ստացված պատկերը (խոսքը թվերի առաջին սյունակի մասին է) հիմնականում հարազատ լինելով Խորենացուն, միևնույն ժամանակ շեղվում է ստույգ ժամանակագրությունից։ Այսպես, Տիգրան—Արտավազդը, որոնք ըստ Խորենացու մոտ նրանց ուղեկցող իրադարձությունների պետք է տեղադրվեին 70/69—34 թթ. մ. թ. ա.[15], այստեղ տեղադրվում են 56—22 թթ. մ. թ. ա. (կամ 54—22, եթե այնուամենայնիվ համարենք, թե Խորենացին Արտավազդին գահատարիներ չի տվել)։ Խորենացին յուրովի ընդօրինակել է Հովսեփոս Փլաբիոսից Տիգրան—Արտավազդի գահատարիների քանակությունը միայն, բայց տեղադրել է դրանք իր աղյուսակում համաձայն իր սեփական ժամանակագրական կոնցեպցիայի։ Զարմանալի ոչինչ չկա, քանի որ Խորենացու համակարգում նույնանման ուրիշ շեղումներ էլ կան՝ նույն կոնցեպցիայի օրինաչափ ծնունդ, որոնք նշվեցին հոդվածի սկզբում։ Այն շեղումներն անշտկելի են և բոլորի կողմից ընդունվում են ի գիտություն, այս շեղումն էլ, ինչպես տեսանք, անշտկելի է ու այն ևս ստիպված ենք ընդունել ի գիտություն։ Կարելի է փորձել այն պարզաբանել, մեկնաբանել, բայց շտկման փորձերը կվերածվեն Խորենացուն «կատարելագործելու» ճգնանքի։

* * *

Անդրադառնանք այժմ Լ. Շահինյանի մյուս երկու առաջարկներին, որոնք թեև առաջինի հետ միասին կորցնում են իրենց արժեքը համակարգի ընդհանուր պատկերի վերարտադրման առումով, սակայն դեռ կարող են տեղական, մասնակի նշանակություն ունենալ Խորենացու ժամանակագրության մասին մեր պատկերացումները լրացնելու իմաստով, եթե, իհարկե, ընդունելի գտնվեն։

Այս տեսակետից առաջին հայացքից խոստումնալից է թվում թվարկած առաջարկներից երկրորդը։ Լ. Շահինյանը ուշադրություն է դարձրել և փորձել է Խորենացու ժամանակագրության հետազոտման գործին ծառայեցնել Աստղիկի մոտ հանդես եկող որոշ հետաքրքրական թվական տվյալներ, որոնք մինչև օրս այդ առումով գրեթե[16] անտեսված են եղել։ Խնդիրն այն է, որ

համակարգը մի՛ կերպ կտեղադրվի համաշխարհային պատմության ժամանակագրական տախտակի վրա, իսկ եթե երկրորդը, ապա միանգամայն այլ կերպ՝ 41 տարով ավելի ուշ։ Ահա և երկու նոր մեկնություն (ըստ Շահինյանի՝ «համակարգ»)։ Մի այլ օրինակ, որը ևս երկու նոր մեկնության հնարավորություն է տալիս։ Հայոց Վարազդատը գահ է բարձրացել, ըստ Խորենացու, Շապուհ Բ-ի (309—379 թթ., տե՛ս դասագրքերը) 56-րդ տարում (—364 թ.), որը, դարձյալ ըստ Խորենացու, համընկնում է Թեոդոս Մեծի (թագավորության սկիզբը՝ 379 թ., տե՛ս դասագրքերը) 20-րդ տարվան (=398 թ.)։ Ստացանք արդեն վեց տարբեր մեկնություն («համակարգ»)։ Դրանց հետ միասին, Խորենացու հաղորդած յուրաքանչյուր իրադարձությունը վեց տարբեր թվականներով թվագրելու հնարավորություն։ Կարելի է շարունակել...

Այս բոլորն ասվում են ոչ թե մեր գրքում երեք նման մեկնությունների՝ հետազոտական նպատակներով կիրառումը արդարացնելու (այդ ամենը հիմնավորված է գրքում), այլ ցույց տալու համար, որ Խորենացու ժամանակագրական համակարգի վերականգնման ու գնահատման գործը անհամեմատ ավելի բարդ է, քան պատկերացնում է Լ. Շահինյանը, որը, ինչպես վերը տեսանք և դեռ կտեսնենք, բոլոր այդ բարդությունները «լուծում է» մկրատի և սոսնձի օգնությամբ, փոխանակ փորձ անելու հասկանալ և բացատրել դրանք։

15 Տե՛ս Գ. Սարգսյան, նշվ. աշխ., «Էրեբունի», 1967, № 12, էջ 67 և հտ.։

16 Մասամբ նրանց վրա ուշադրություն է դարձրել Հ. Տաշյանը, տե՛ս Արշակունի դրամներ, մասն Բ, Վիեննա, 1960, էջ 357 և հտ.։

Ստեփանոս Տարոնեցի Ասողիկը՝ X դարի վերջի—XI դարի սկզբի պատմիչ, Խորենացու հետևորդներից մեկը, ինչպես, ընդհանրապես, հին շրջանի պատմության շարադրանքի, այնպես էլ, մասնավորապես, ժամանակագրական հարցերում, առաջին և երկրորդ պարթև իշխողների գահատարիների համար՝ հակառակ Խորենացու մոտ մեզ հասած 31 և 26 թվերի, պահպանել է համապատասխանաբար 57 և 31 թվերը։ Բացի այդ, Ասողիկին ժամանակով շատ մոտ կանգնած մի Անանուն պատմիչ, Սեբեոսի «Պատմության» կից հատվածի պարթևական երկրորդ արքայացանկում հաղորդել է այս վերջին թվերը նույնությամբ, ըստ որում, ներածել է այդ հաղորդումը հետևյալ վերտառությամբ. «Արդ՝ թե պիտոյ է քեզ, ո՛վ ընթերցասէր, երկրորդեցից ի պատմագրացն Մովսիսի Խորենացւոյ և Ստեփանոսի Տարաւնացւոյ, հաւաստի և ճշմարիտ մատենագրաց՝ զորդի ի հաւրէ ճանաչելի»[17]։

Այս բոլորը բավարար հիմք են ենթադրելու համար, թե գուցե վերոհիշյալ 57 և 31 թվերը սկզբնապես եղել են նաև Խորենացու մոտ՝ այսօրվա 31 և 26 թվերի փոխարեն։ Այլապես, ինչպե՞ս բացատրել Անանուն պատմիչի այն խոսքը, թե նա դրանք վերցրել է Մովսես Խորենացուց և Ստեփանոս Տարոնեցուց (Ասողիկից)։ Եվ Լ. Շահինյանը ճիշտ է վարվել, հատուկ ուշադրություն նվիրելով այս տվյալներին։ Սակայն, ցավոք, այս ենթադրությունը ևս, հազիվ ծնված, վերածվել է սևեռուն գաղափարի, և Շահինյանը շտապել է նրա հետքերով, առանց հաշվի առնելու, որ նույնիսկ ամենասրամիտ ենթադրության և ճշմարտության միջև սար ու ձոր կա, որոնք պետք է հաղթահարել։

Ահա, վերոհիշյալ թվերը Խորենացուն վերագրելու փորձի հենց սկզբում ծագում է հետևյալ խնդիրը։ Դեռևս Ն. Ադոնցը, իսկ վերջերս՝ Գ. Աբգարյանը, առաջինը՝ սոսկ նշմամբ, իսկ երկրորդը՝ մանրամասն համադրությունների հիման վրա, հայտնել են այն միտքը, որ Անանուն պատմիչը թեև հիշատակում է և՛ Խորենացուն, և՛ Ասողիկին, բայց իրականում արտագրել է միայն Ասողիկից[18]։ Նշենք, որ այս ասված է ժամանակագրական տվյալների հետ ոչ մի առնչություն չունեցող նկատառումներով։ Լ. Շահինյանը այդ կապակցությամբ բավարարվում է հետևյալ խոսքերով. «...մենք համամիտ չենք Գևորգ Աբգարյանի այն կարծիքին, թե երրորդ գրքի հեղինակը (Անանունը—Ռ. Ս.) ծանոթ է Խորենացուն Ասողիկի միջոցով։ Ընդհակառակը, ինչպես հայտնում է Անանուն հեղինակը, նա հավասարաչափ ծանոթ է թե՛ Խորենացուն և թե՛ Ասողիկին։ Այս բանում կհամոզվենք դեռևս հետագա շարադրանքի ընթացքում, երբ ապացուցած կլինենք Ասողիկի, հետևաբար և Անանուն Բ-ի ավանդած պարսից Արշակունիների արքայացանկի հավաստիության հարցը» (էջ 37)։

Տեսնում ենք, որ Լ. Շահինյանը լոկ խոսքերով է մերժում Ն. Ադոնցի և Գ. Աբգարյանի տեսակետը, հակադրելով դրան սոսկ Անանունի հայտարարությունը (որին հիշյալ հեղինակները առանց իր օգնության էլ քաջատեղյակ են) և որպես ապացույց ծառայեցնելով դեռևս ապացուցելին։

Տեղի սղությունը ստիպում է մեզ հրաժարվել Ասողիկի, Անանունի և Խորենացու համապատասխան հատվածների խիստ պերճախոս համադրությու-

17 «Սեբէոսի եպիսկոպոսի պատմութիւն», Երևան, 1939, էջ 11։

18 Н. Адонц, «Начальная история Армении» у Себеоса в ее отношениях к трудам Моисея Хоренского и Фауста Византийского, «Византийский временник», 1901, № 1—2, отд. отт., стр. 6. Գ. Աբգարյան, «Սեբեոսի պատմությունը» և Անանունի առեղծվածը, Երևան, 1965, էջ 63 և հտ.։

նից[19], որից ակներև է դառնում Ն. Ադոնցի և Գ. Արդարյանի իրավացիությունը, այսինքն պարզվում է, որ Անանունն անմիջականորեն և հարազատորեն արտագրել է Ասողիկից, ըստ որում, կամ չի ունեցել ձեռքի տակ Խորենացու երկը, կամ, ունենալով, խուսափել է նրանից մի բան վերցնել՝ ի հավելումն Ասողիկի հաղորդածի, կամ էլ, վերջապես, անտեսել է Խորենացուն[20]։

Այլապես Խորենացու տեքստը որևէ, գոնե փոքր, ազդեցություն կթողներ, որի հետքն անգամ չկա։ Ասենք, կնշվեր, թե Արշակը, թագավորեցնելով Վաղարշակին՝ իր երկրորդն է դարձրել, ինչպես ասված է Խորենացու մոտ, կամ մի այլ, թեկուզ աննշան բան։ Երեք այս ենթադրություններից վերջին երկուսը անհավանական են։ Անանուն պատմիչը պարզապես չի ունեցել (կամ այդ ժամանակ ձեռքի տակ չի ունեցել) Խորենացու երկը։ Բայց եթե այդպես է, ապա ինչո՞ւ է նա Ասողիկի կողքին և նրանից էլ առաջ վկայակոչում Խորենացու անունը, որպես իր երկու աղբյուրներից մեկի։ Սա մի մեծ հանելուկ չէ։ Այն լուծելու համար բավական է հայացք ձգել Ասողիկի երկի այս «Առաջին հանդեսիս» եզրափակման մեջ ասված խոսքերին. «Այլ որ ինչ ի թագաւորութենէն Արշակայ Քաջի մինչև ցայսր ասացաւ՝ ի մեծէ պատմագրէն Մովսիսէ Տարօնացւոյ՝ Բագրևանդայ և Արշարունեաց եպիսկոպոսէ է, որ է աւարտումն բանիս մերոյ մահն Խոսրովու Հայոց արքայի» (էջ 53)։ Անանունը ևս կարդացել է այս հաղորդումը և յուրովի օգտագործել այն։

Ահա թե ինչպիսի բարդությունների հետ է կապված Անանունի այդ հատվածի խնդիրը, որոնք ամենևին չեն երևում քննարկվող հոդվածում։

Սակայն, եթե Անանունի այս հատվածի նշանակությունը քննարկվող խնդրի առումով խիստ նսեմանում է, եթե չասենք՝ վերանում, ապա դեռ մնում է ինքը՝ Ասողիկը և նրա կողմից՝ Խորենացու վկայակոչումը։ Արդյոք ճիշտ չի՞ լինի, անկախ Անանունի հաղորդումից, ներմուծել Ասողիկի տված թվերը Խորենացու ժամանակագրության մեջ։ Շոշափենք նախ հարցի հնագրական կողմը։ Վիճակը այսպիսին է. Խորենացին երկու անգամ Արշակ Քաջի համար հաղորդում է 31 թիվը (II, Բ և ԿԸ) և երկու անգամ էլ Արտաշեսի համար՝ 26 թիվը (նույն գլուխներում)։ Խորենացու երկի մեզ հասած ձեռագրերից և ոչ մեկում այդ թվերը տարբերթերցվածներ չունեն։ Արշակ Քաջի համար 31 (ԼԱ) թիվը նույնությամբ կրկնված է Խորենացու միջնադարյան բոլոր հետևորդների մոտ, բացի, հասկանալի է, Ասողիկից (և, որ ինչպես պարզվեց, նույնն է՝ Անանունի երկրորդ ցանկից)։ Արտաշեսի համար 26 (ԻԶ) թիվը նույնությամբ կրկնում է հետևորդների մի մասը, իսկ մյուս մասը տալիս է 46 (ԽԶ). հասկանալի է, որ սա Ի (20) և Խ (40) նիշերի շփոթման հետևանք է։ Ասողիկի մոտ, ինչպես նշվեց, այլ է։

Այժմ ընդունենք մի պահ, թե Խորենացու տեքստում Արշակ Քաջի և Արտաշեսի համար սկզբնապես իրոք եղել են 57 և 31 թվերը։ Ի՞նչ ձանապար-

---

19 Տե՛ս «Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական», երկրորդ տպագրութիւն, ՍՊԲ, 1885, էջ 29—31։ Անանունի երկրորդ պարթևական արքայացանկ («Սեբէոսի եպիսկոպոսի պատմութիւն», Երևան, 1939, էջ 11—12)։ Խորենացի, II, Բ, Գ, ԿԸ, ԿԹ։

20 Անանունի ամբողջ հատվածում Ասողիկի ղեխի վրայով Խորենացուն կարելի է վերագրել միայն առաջին երկու բառը՝ «Յետ մահուանն» (այն էլ, ի դեպ, կա Ասողիկի մոտ՝ հաջորդ էջում «յետ Կ տամի մահուանն Աղեքսանդրի»), բայց այս ընդհանուր ոճը այն պատվանդանը չէ, որի վրա կարելի լիներ մի բան կառուցել։ Անանունի «կեցեալ ամս ՃԼ»-ը միանգամայն այլ ծագում ունի, քան Խորենացու — Ասողիկի ոլորտը։ (Հմմտ. Н. Адонц. նշվ. աշխ., էջ 5, ծան. 2)։

հով կարող էին դրանք փոփոխվել, վերածվել 31-ի և 26-ի, որոնք և հաճել են մեզ անխտիր բոլոր ձեռագրերում։ Սովորական աղճատման ճանապարհը, մեր կարծիքով, բացառված է կամ գոնե խիստ անհավանական՝ հետևյալ պատճառով. փոփոխվում, շփոթվում են մեծ մասամբ այն թվանշանները, որոնք իրար նման են, ասենք՝ Ի և Խ, Գ և Դ և այլն։ ԼԱ (31) նիշերը նման չեն ԾԷ նիշերին, իսկ ԻԶ (26) նիշերն էլ՝ ԼԱ-ին։ Իհարկե, լինում են և այդպիսի, տեսքով իրարից տարբեր, նիշերի շփոթման դեպքեր, բայց դրանք համեմատաբար ավելի քիչ են պատահում։ Այստեղ ենթադրվում է իրար չնմանվող նիշերի ոչ թե եզակի՝ դիպվածային, այլ զանգվածային շփոթում՝ չորս նիշ շփոթվել են չորս համապատասխանաբար իրար չնմանվող նիշերի հետ՝ Ծ-ն դարձել է Լ, Է-ն՝ Ա, Լ-ն՝ Ի և Ա-ն՝ Զ։ Այսպիսի դեպքի հավանականության աստիճանը գրեթե զերոյի է հավասար։ Մնում է, ուրեմն, այդ երկու զույգ թվերի՝ մեկը մյուսին անցման միայն մի ճանապարհ՝ խմբագրության ճանապարհը։ Մի «շարամիտ» ձեռք, հանդիպելով Խորենացու ձեռագրի մեջ 57 և 31 թվերին, ինչ-ինչ պատճառներով հավանություն չի տվել դրանց և փոխարինել է համապատասխանաբար 31 և 26-ով, այդպիսով սկիզբ դնելով այդ, Լ. Շահինյանի կարծիքով՝ սխալ ընթերցումներին։ Այսպիսի դեպքը հնարավոր է։ Նույնչափ հնարավոր է նաև հակառակը։

Արդ, տեսնենք, թե երբ և ինչպես կարող է տեղի ունեցած լինել նման փոփոխումը։ Ըստ երևույթին՝ Ասողիկից (այսինքն՝ X և XI դարերի եզրից) հետո (եթե խոսքը 57 և 31 թվերի՝ 31 և 26-ի վերածվելու մասին է), որովհետև Ասողիկը ձեռքի տակ դեռևս ունեցել է այդ թվերի առաջին զույգը։ Հիրավի, Խորենացու՝ Ասողիկից հետո ապրած հետևորդներն ունեն արդեն թվերի երկրորդ զույգը՝ 31 և 26 (ոմանք էլ, ինչպես ասվեց՝ 46՝ 26-ի փոխարեն, որպես սրա տարբերակ)։ Բայց արի ու տես, որ Ասողիկից առաջ էլ թվերի այդ զույգը՝ 31 և 26, ունի Ուխտանես պատմիչը՝ X դարի հեղինակ, և այն էլ յուրաքանչյուրը կրկնված երկու անգամ[21]։

Իսկ Ուխտանեսը այն հեղինակն է, որը ոչ միայն ավելի վաղ է ապրել, քան Ասողիկը, այլև որը իր տվյալներով ավելի է օժանդակում Խորենացու ժամանակագրական համակարգի վերականգնմանը, քան նա։ Այսպես, եթե վերանանք քննարկման առարկա երկու թվերից, ապա Ուխտանեսը մատուցում է մեզ Խորենացու «սրթևական արքայացանկերի գահատարիների սրբագրման անառարկելի երեք դեպքերից (այսինքն՝ այն դեպքերից, որոնց համաձայն են բոլորը, այդ թվում և Լ. Շահինյանը, տե՛ս նրա աղյուսակը) բոլոր երեքը՝ Արշանակին՝ 31-ի փոխարեն՝ 32, Արշակ Գ-ին՝ 19-ի փոխարեն՝ 17[22], Արտավանին՝ 31-ի փոխարեն՝ 36, իսկ Ասողիկը միայն երկուսը՝ Արշանակի և Արտավանի թվերը։ Արտաշես Բ-ի համար Ուխտանեսը պահպանել է Խորենացուն հարազատ թիվ՝ 34 տարի, մինչդեռ Ասողիկի համապատասխան թիվը աղճատված է՝ 31, և Լ. Շահինյանը ստիպված է լինում այն սրբագրել։

Այսպիսով, Ուխտանեսը Խորենացուն հարազատ լինելու տեսակետից գերազանցում է Ասողիկին, ժամանակով էլ ավելի վաղ է։ Սրանով Ասողիկը առաջին երկու պարթև արքաների գահատարիների հաղորդած իր թվերով, լրիվ մեկուսանում է, դառնում առանձնակի երևույթ։ Նրանից առաջ էլ, նրանից հետո

21 Ուխտանես եպիսկոպոս, Պատմություն հայոց, Վաղարշապատ, 1877, էջ 38 և 62։

22 Ուխտանեսի մոտ, ըստ հրատարակված տեքստի՝ 57, այսինքն այստեղ էլ աղճատված է տասնավորը։

էլ ունենք այն թվերը, որոնք հայտնում է Խորենացին, ուստի և բնական է նշված փոփոխության պատճառները փնտրել հենց Ասողիկի մեջ, և այդ խնդրի բննությունը վերապահել ոչ թե խորենացիագիտության, այլ Ասողիկի պատմության ուսումնասիրության։

Չարժե այս բոպեին հանպատրաստից ոտք դնել այդ բնագավառը, սակայն սույն խնդրի լուծման համար այժմ էլ տեսանելի են այնտեղ այսպիսի նախապայմաններ։ Լ. Շահինյանը անտեղյակ է թողնում ընթերցողին, որ Ասողիկը պարթևական երկու արքայացանկ է հաղորդում (տե՛ս «Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն...»)։ Դրանցից մեկն ընդգրկում է երեք իշխողների, որոնք են՝ Արշակ Քաջ, Արտաշես (կամ Արտաշիր) և Արշակ Մեծ։ Երկրորդն ընդգրկում է տասներեք իշխողների և առաջինի նման սկսվում է Արշակ Քաջով (որը այստեղ ևս պահպանում է իր 57 տարին), բայց այս ցանկից բացակայում է նրա որդի Արտաշեսը։ Կարելի էր ենթադրել, թե Արտաշեսը տեքստի աղճատման հետևանքով է դուրս մնացել, բայց ոչ՝ ցանկը նույնությամբ կրկնվում է Անանուն պատմիչի մոտ (տե՛ս վերը արված համադրությունը), որը ժամանակով շատ մոտ է Ասողիկին[3]. ըստ որում Անանունի մոտ բառացիորեն կրկնվում է ոչ միայն ցանկը իր 13 անուններով և սրանց գահատարիների թվերով, այլև գահատարիների հանրագումարային թիվը՝ 457։ Ուրեմն թե՛ ցանկը, թե՛ հանրագումարը իրեն՝ Ասողիկինն են։ Եվ հենց այս է Ասողիկի հիմնական արքայացանկը, որից, ուրեմն, նա ինչ-ինչ պատճառներով վտարել է երկրորդ գահակալ Արտաշեսին։ Սրանով Ասողիկի ցանկը տարբերվում է Խորենացու ցանկից, որն ընդգրկում է 14 անուն։ Միևնույն ժամանակ այն չի տարբերվում Խորենացու ցանկից գահատարիների գումարի առումով, որովհետև Արշակ Քաջին այստեղ հատկացված 57 տարին ճիշտ և ճիշտ հավասար է Խորենացու մոտ Արշակ Քաջին և նրա որդի Արտաշեսին տրված գահատարիների գումարին (31+26=57)։ Կարծես թե Արտաշեսը հեռացել է՝ գահատարիները թողնելով իր հորը։

Ինչպե՞ս բացատրել այս բոլորը։ Ասողիկը մշակել է Խորենացու արքայացանկը, այդ պարզ է, բայց ի՞նչ դրդապատճառով, այլ աղբյուրների ազդեցության տա՞կ, ինչպես կարծում է Հ. Տաշյանը[4], թե՞ իր ժամանակագրական ներքին հաշիվներից ելնելով։ Դժվար է այստեղ ասել։ Իսկ Լ. Շահինյանը, նախքան Ասողիկի այս տվյալները անվերապահորեն օգտագործելը, պարտավոր էր քանդել հանգույցը, լուծել Ասողիկի այս ներքին հակասությունները։

Հարկ է ավելացնել նույնպես, որ Ասողիկը Խորենացու հետևորդներից ամենից ավելի ինքնուրույն է նաև ժամանակագրության այլ հատվածներում։ Համոզվելու համար բավական է համեմատել թեկուզ նրա և Խորենացու՝ Սասանյան արքաների ցանկերը, որոնցում 9 արքաներից 7-ի գահատարիները տարբեր են երկու հեղինակների մոտ, կամ հայ Արշակունիների ցանկերի վերջին հատվածները և այլն։

Վերջապես, այստեղ հարկ է հիշել Լ. Շահինյանի այն նախորդների ծառայությունները, որոնք իրենց առջև նույն նպատակն են դրել, այն է՝ լրացնելով Խորենացու ժամանակագրության սկզբնական հատվածում նկատվող տարի-

23 Տե՛ս Գ. Արզարյան, նշվ. աշխ., էջ 127 և հտ.։

24 Հ. Տաշյան, նշվ. աշխ., էջ 357։ Այս հարցերի կապակցությամբ տե՛ս նաև «Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան պատմութիւն տիեզերական», ԵՊՀ, 1893, էջ 312, և հտ., ծան. 39 (Ստ. Մալխասյանց)։

ների պակասը՝ մոտեցնել այն ստույգ ժամանակագրությանը, սակայն գրան հասնելու համար այլ միջոցի են դիմել։ Համապատասխան առաջարկը արել է Ք. Պատկանյանը և ընդունել են Հ. Տաշյանն ու Թ. Ավգալրեգյանը։

Այդ առաջարկի համեմատությունը Լ. Շահինյանի արած առաջարկի հետ՝ խիստ աննպաստ է վերջինիս համար, նախ և առաջ նրանով, որ այն անբրոնազրոս է բանասիրական և, մասնավորապես, հնագրական տեսակետից (իսկ թե ինչպիսին է այդ առումով Լ. Շահինյանի առաջարկը՝ մենք տեսանք)։ Հիրավի, վերոհիշյալ առաջարկով պարթև երկրորդ իշխող Արտաշեսի 26 տարին պարզապես սրբագրվում է 46-ի, հիմք ընդունելով Ի (20) և Խ (40) նիշերի նմանությունն ու դյուրաշփոթելիությունը և, մանավանդ, այն հանգամանքը, որ Խորենացու մի քանի հետևորդների մոտ (այդ մասին խոսվել է վերը) հենց այդպես էլ կա՝ 46 տարի։

Տարակուսանք չի կարող չառաջացնել նաև երկու նշված առաջարկներից ստացվող արդյունքը գնահատելիս։ Լ. Շահինյանի առաջարկը, մոտավորապես շրջելով Խորենացու ժամանակագրության համապատասխան հատվածի մի մասը (Արշակ Մեծից մինչև Տիգրան Բ), ընդհակառակը, մյուս նախնական մասը (մասնավորապես Սելևկյանների ժամանակագրությունը, որը Խորենացու մոտ այսօրվա վիճակով էլ միանգամայն հարազատ է ստույգ ժամանակագրությանը և ոչ մի շտկում չի պահանջում) անճանաչելիորեն աղավաղում է[25], որում կհամոզվենք առաջիկա էջերից։ Իսկ Ք. Պատկանյանի (և Հ. Տաշյանի, Թ. Ավդալբեգյանի) առաջարկը, որը Շահինյանից շատ առաջ հանգեցրել էր նրա շրջված մասի (Արշակ Մեծից մինչև Տիգրան Բ) միանգամայն նույնանման շրջմանը[26], միաժամանակ անաղարտ է թողնում վերոհիշյալ նախնական մասը՝ Սելևկյանների ժամանակագրությունը։

Թողնելով ընտրությունը ընթերցողին[27], անցնենք Լ. Շահինյանի երրորդ առաջարկի քննարկմանը։

* * *

Խորենացին իր երկրորդ գրքի սկզբում (Ա գլխում) հաղորդում է, որ Ալեքսանդր Մակեդոնացու մահվանից հետո Բաբելոնում թագավորեց Սելևկոսը՝ 31 տարի, նրանից հետո՝ Անտիոքոս Սոտերը՝ 19 տարի, այնուհետև՝ Անտիոքոս Թեոսը՝ 10 տարի, իսկ սրա 11-րդ տարում ապստամբեցին պարթևները և նրանց մոտ թագավորեց Արշակ Քաջը։ Հաջորդ գլխում (Բ) Խորենացին հայտ-

25 Կամ, եթե Սելևկյանների ժամանակագրությունը իր օրինական տեղում մնա, այդ դեպքում ջուրն են ընկնում հաջորդող հատվածի շտկման արդյունքները։

26 Հմմտ. Թ. Ավդալբեգյանի և Լ. Շահինյանի կազմած աղյուսակների համապատասխան հատվածները։ Այստեղ միակ տարբերությունը այն է, որ Թ. Ավդալբեգյանի մոտ բոլոր տարեթվերը մեկ տարով ավելի վաղ են, որովհետև նա հիմնվում է մ. թ. ա. 312 թ. վրա, որպես Խորենացու ժամանակագրության սկզբնակետի և ոչ 311-ի, որ ճիշտն է։

27 Լ. Շահինյանի առաջարկը գուցե տեղին լիներ Պատկանյանից առաջ, որպես սրա առաջարկին մոտեցնող մի աստիճան, իսկ այժմ անտեղի է, մի քայլ ետ է տանում։ Սակայն Պատկանյանի առաջարկն էլ ընդունելու համար պետք է նախ ապացուցել, որ այն բխում է ոչ միայն Խորենացու ժամանակագրության համապատասխան հատվածը ստույգ ժամանակագրությանը հարազատ տեսնելու օրինական ցանկությունից, այլև իրեն՝ Խորենացու կուռ ժամանակագրական համակարգի ներքին հրինաչափություններից ու պահանջներից։ Այս առումով Լ. Շահինյանի դիտած այն փաստը, որ Ասողիկի ցուցմամբ Վաղարշակը կանգնեցնում է Պոմպեոս Եվերգետես Ա-ի 12-րդ տարում (էջ 41), անշուշտ, ուշագրավ է, բայց ամենևին բավական չէ, ցուցումը, այնուամենայնիվ, Ասողիկի հաշվումների արդյունք է և ոչ Խորենացու։

նում է. «Որպէս ասացաք՝ յետ վաթսուն ամի մահուանն Աղեքսանդրի՝ թագաւորէ ի վերայ Պարթևաց Արշակ Քաջ...»։ Թվերը իրար բռնում են 31 + 19 + 10 = 60, ուրեմն, Խորենացին Ալեքսանդր Մակեդոնացու մահը և Սելևկոսի գահակալությունը դնում է միևնույն տարում, որով հակասում է պատմական իրականությանը, քանի որ իրականում այդ երկու իրադարձությունների միջև 12 տարի է ընկած՝ մ. թ. ա. 323—311 թթ.։ Նույն պատկերն է և Խորենացուն հետևող բազմաթիվ միջնադարյան հայ պատմիչների մոտ։

Այդ հակասությունը պարզաբանել է դեռևս Սեն-Մարտենը[28], և նրա տեսակետը ընդունվել է հայագիտության մեջ ու հետագայում զարգացվել Հ. Տաշյանի կողմից[29]։

Լ. Շահինյանը փորձում է հիմնավորել մի նոր տեսակետ[30], որը առաջնորդում, ինչպես ինքն է նշում, լոկ հարևանցիորեն ակնարկել են Գարագաշյանը և Գր. Խալաթյանը։

Հարցի էությունը ընթերցողին մատչելի դարձնելու համար այդ երկու առաջարկները ներկայացնենք սխեմատիկ աղյուսակի ձևով, ըստ որում թվերի առաջին սյունակում տրված են նշված իրադարձությունների իրական պատմական (ստույգ) տարեթվերը, որոնք հավաստված են բազմաթիվ ու բազմատեսակ՝ պատմական, ժամանակագրական, վավերագրական, դրամագիտական աղբյուրներով։

Իրադարձություններ	Տարեթվեր՝ ըստ ստույգ ժամանակագրության (մ. թ. ա.)	Խորենացին ըստ Սեն-Մարտենի—Տաշյանի (մ. թ. ա.)	Խորենացին ըստ Լ. Շահինյանի (մ. թ. ա.)
Ալեքսանդրի մահը	323	311	323
Սելևկոսի գահակալությունը . . .	312 311—280	311—281	322—292
Անտիոքոս Ա-ի գահակալությունը	280—261	280—262	291—273
Անտիոքոս Բ-ի առաջին 10 տարին	261—251	261—252	272—263
Պարթևների ապստամբությունը	250	251[31]	262

Ո՞րն է Սեն-Մարտենի—Տաշյանի և Լ. Շահինյանի տեսակետների տարբերությունը։ Առաջինները Ալեքսանդր Մակեդոնացու մահվան տարեթիվը ըստ Խորենացու բերում հասցնում են Սելևկոսի գահակալման տարեթվին՝ 311-ին, իսկ մնացած թվականները թողնում պատմական իրականությանը հարազատ։ Շահինյանը, ընդհակառակը, պատմական իրականությանը հարազատ է թողնում միայն Ալեքսանդրի մահվան թվականը՝ 323-ը և դեպի այն է ձգում Սելևկոսի գահակալման թվականն ու նրա հետևից՝ բոլոր մնացած թվականները, որով եկրափակիչ պարթևների ապստամբության տարեթիվը ընկնում է 262 թ. վրա։

---

[28] M. J. Saint-Martin, Fragments d'une histoire des Arsacides, T. I, P. 1850, էջ 276—279.

[29] Հ. Տաշյան, Արշակունի դրամներ, «Հանդես ամսօրյա», 1905, էջ 290—299, նույնը առանձին գրքով՝ Արշակունի դրամներ, մասն Բ, Վենետիկ, 1960, էջ 295—328։

[30] Իր այս առաջարկի հիմնավորմանը Շահինյանը առանձին հոդված է նվիրել՝ «Պարսից Արշակունի հարստության հիմնադրման տարեթիվն ըստ Խորենացու» («Պատմա-բանասիրական հանդես», 1966, N 1, էջ 155—172)։ Մենք վկայակոչելու ենք այս հոդվածը, քանի որ «Բանբերում» զետեղված հոդվածի համապատասխան մասը սոսկ որա սեղմ շարադրանքն է։

[31] Խորենացու և ստույգ ժամանակագրությունների միջև նկատվող այս 1 տարվա տարբերությունը դալիս է նրանից, որ Խորենացին Սելևկոս Ա-ին իրական 32 տարվա գիմաց տալիս է մեկ տարով պակաս՝ 31 տարի։

Տարբերությունը պարզ է, այժմ տեսնենք հիմնավորումները։

Սեն-Մարտենի—Տայլանի տեսակետի հիմնավորումը։ Խորենացու տվյալների՝ պատմական իրականությանը հարազատ լինելուց բխում է, որ իր ժամանակագրության այս հատվածի համար նա ձեռքի տակ ունեցել է լավագույն աղբյուրներ, հավանաբար Եվսեբիոսի «Քրոնիկոնը» կամ Ափրիկանոսի երկը, կամ նման մի այլ պատմա-ժամանակագրական գործ, որոնք բոլորն էլ լինելով հունա-հռոմեական պատմա-ժամանակագրական հարուստ տրադիցիայի ծրնունդ, նույն այդ թվերը պիտի մատուցեին Խորենացուն, քանի որ հիշյալ տրադիցիան ուրիշ թվեր չգիտե։ Բացատրության կարիք է զգում սակայն Ալեքսանդրի մահվան և Սելևկոսի գահակալման տարեթվերի նույնացումը, որը զգալի չեղում է պատմական իրականությունից և հունա-հռոմեական աղբյուրներից, քանի որ այդ տարեթվերի միջև իրականում 12 տարի է եղել ընկած։

Հարց է ծագում, թե ի՞նչ երևույթ է այս, երբ Ալեքսանդր Մակեդոնացու մահվան և Սելևկոս Ա-ի գահակալման տարեթվերը նույնանում են, նրանց միջև եղած ժամանակահատվածը՝ անտեսվում։ Արդյոք սա եզակի՞ երևույթ է հատկանշական միայն Խորենացու ու նրա հետևորդների ժամանակագրության համար, թե՞ այն ավելի լայն տարածում ունի կամ միգուցե նույնիսկ սովորական է, որոշ կարգի աղբյուրների համար։ Այնուհետև, այդ երկվական տարեթիվը ժամանակագրական ցանցի մեջ տեղադրելիս նրա երկու բաղադրիչներից որի՞ն պիտի հետևել՝ 323 թ., թե 212/311 թ.։

Խոսքը տանք Սեն-Մարտենին։ Խորենացին, ասում է նա, «արևելցիների մեծամասնությունն նման սկսել է սելևկյան էրան Ալեքսանդրի մահվան ենթադրյալ ժամկետից»։ Այս միտքը նա պարզաբանում է հետևյալ խոսքերով. «Հաստատ է, որ մինչև մեր օրերը ասորիները տալիս են Ալեքսանդրի անունը այն էրային, որի սկիզբն է Քրիստոսից առաջ 311 թվականի հոկտեմբեր ամիսը»։ Բացենք ժամանակագրության խնդիրներին նվիրված ցանկացած ձեռնարկը և ամենուրեք սելևկյան էրային նվիրված բաժնում տեղեկություն կգտնենք այն մասին, որ սելևկյան էրան տարբեր անվանումներ է ունեցել, օրինակ, «հունաց թվական», և որ, հիրավի, հենց Խորենացու ժամանակաշրջանում, նրանից առաջ և նրանից հետո էլ Արևելքում՝ ասորիների, պարսիկների, արաբների ու այլ ժողովուրդների մոտ այդ էրայի ամենատարածված անվանումներից մեկը կապված է եղել Ալեքսանդր Մակեդոնացու (Ռսքանդարի, Սրկեղջյուրի) անվան հետ։ Եվ այդ՝ հակառակ այն իրողության, որ Ալեքսանդրը մահացել է 312/311 թ. 12 տարի առաջ[33]։ Ո՞րն է այդ յուրօրինակ երևույթի ստեղծման նախնական պատճառը։ Թերևս Ալեքսանդրի հռչակը, այն, որ նա էր Սելևկյան տերության կարապետը[34] կամ Ալեքսանդր Մակեդոնացու շփոթումը մ. թ. ա. 311 թ. մահացած նրա որդի Ալեքսանդրի հետ[35] կամ մի այլ բան։ Բայց

[32] M. J. Saint-Martin, նշվ. աշխ., էջ 276—279.

[33] Տե՛ս, օրինակ, L. Ideler. Handbuch der mathematischen und technischen Chronologie, II, B., 1826, S. 433 ff.; F. K. Ginzel, Handbuch der mathematischen und technischen Chronologie, I, Lpz., 1906, S. 263; III, Lpz., 1914, S. 40 ff. P. V. Neugebauer, Hilfstafeln zur technischen Chronologie, Kiel, 1937, S. 9; V. Grumel, La chronologie, P., 1959, p. 209 և այլն։

[34] V. Grumel, նշվ. աշխ., էջ 209։

[35] F. K. Ginzel, նշվ. աշխ., III, էջ 10։

սա պատմական այն պարադոքսներից է, որոնց պատճառները դյուրըմբռնելի չլինելով, մնում է անվերապահորեն ընդունել ի գիտություն իրենք՝ փաստերը։

Բերենք մեզ հետաքրքրող փաստը հավաստող բազմաթանակ օրինակներից մի երկուսը՝ տարբեր կարգի աղբյուրներից, ընտրելով ոչ թե սոսկ Ալեքսանդրի տարեթվի վկայակոչումները, այլ այնպիսիք, որոնցում եղած զուգահեռ թվագրությունը հնարավորություն է տալիս ընթերցողին անձամբ գտնելու կիրառված էրայի սկզբնատարին։ Ասորական վարքագրական կոթողներից մեկում հիշատակված է «Ալեքսանդրի 733-րդ տարին, որն ընկնում է պարսից արքա Վարահրանի 2-րդ տարվա վրա»[36]։ Այս Վարահրանը Վռամ Ե-ն է, որը թագավորել է մ. թ. 420—439 թթ. և որի 2-րդ տարին է, հետևաբար, 421 թվականը։ Հանենք այդ թիվը 733-ից և կստանանք 312 թ. մ. թ. ա.՝ սելևկյան էրայի սկզբնատարին։ Քիչ հետո նույն երկում հանդիպում ենք մի այլ օրինակի, որտեղ Ալեքսանդրի 732-րդ տարին համընկնում է նույն Վարահրանի 1-ին տարվան[37]։ Կրկին հաշվելն ավելորդ է։ Քաղկեդոնի ժողովի վավերագրերից մեկում գտնում ենք այսպիսի թվագրություն՝ «Պավլինոսի և Հուլիանոսի հյուպատոսության օրոք (= մ. թ. 325 թ.), 636 թվականին Ալեքսանդրից հետո»[38]։ Այստեղ ևս հաշվելն ավելորդ է (636—325=311)։ Եվս մի օրինակ. «Գրեալ է թուղթս ի քաղաց ամսեան որ ամ վեց հարիւր յիսուն և հինգ էր Ալեքսանդրի որդւոյ Փիլիպպեայ Մակեդոնացւոյ, եւ էր ամ երեսուն և հինգ Շապհոյ արքայի Պարսից»։ Շապուհ Բ-ի (որի մասին է այստեղ խոսքը) 35-րդ տարին է 343 թ., քանի որ նա թագավորել է 309-ին։ 655—343=312՝ նորից սելևկյան էրայի սկզբնատարին։ Օրինակը ծագում է արդեն հայկական ոլորտից՝ Հրահատ Զգոնի Ճառերի հայերեն թարգմանությունից[39]։ Այս օրինակը, մի շարք ուրիշների հետ միասին, վկայակոչում է Հ. Տաշյանը իր վերոհիշյալ «Արշակունի դրամներ» աշխատության մեջ, որտեղ մանրամասն կերպով հետազոտված են սելևկյան էրայի սկզբնատարվա՝ Ալեքսանդր Մակեդոնացու անվան հետ կապվելու հանգամանքի տարբեր ասպեկտները, և ցույց է տրված հայկական միջավայրը թափանցած այդ երևույթի նշանակությունը Խորենացու քննարկվող արտահայտությունը ըմբռնելու գործում։

Այսպիսով, բերված տեղեկություններն ու օրինակները ակնհայտ են դարձնում, որ Խորենացին ու իր հետևորդները բնավ միայնակ չեն Ալեքսանդր Մակեդոնացու մահվան տարեթիվը Սելևկոս Ա-ի գահակալման տարեթվի հետ նույնացնելու գործում, և որ այդ նույնացման փաստից արդեն, որտեղ էլ որ այն հանդիպի, ինքնին բխում է երկվական այդ տարեթվի՝ հենց մ. թ. ա. 312/311 թ. տեղադրվելու անխուսափելիությունը։ Ուստի և Խորենացու այն ցուցումը, թե պարթևների ապստամբության տարեթիվը՝ Անտիոքոս Գ Թեոսի 11-րդ տարին՝ համընկնում է Ալեքսանդր Մակեդոնացուց հետո 61-րդ տարվան («յետ վաթսուն ամի մահուանն Աղեքսանդրի») հնարավոր չէ ընկալել այլ կերպ, քան որպես վերոհիշյալ երևույթի դրսևորման ևս մի օրինակ՝ վերը բերված օրինակների կողքին։

Խորենացու շեղումն այս խնդրում իր օգտագործած հունա-հռոմեական ոլորտի աղբյուրների տվյալներից, այսպիսով, գալիս է, ինչպես տեսնում ենք

[36] Echte Acten h. Martyrer des Morgenlandes, II, Innsbruck, 1736, S. 24.
[37] Նույն տեղում, էջ 58։
[38] F. K. Ginzel, նշվ. աշխ., III, էջ 40։
[39] «Գիրք որ կոչի Հայոց», Կոստանդնուպոլիս, 1824, էջ 394։

մի այլ, ևս Խորենացուն հարազատ, ոլորտի աղբյուրներից, որոնց ապդեցությունը տվյալ դեպքում ինչ-ինչ պատճառներով ավելի զորեղ է գտնվել։

Ասածս ամենևին չի նշանակում, թե հնարավոր չէր կամ Խորենացին չէր կարող հաշվել ժամանակը Ալեքսանդրի մահվան բուն տարեթվից, այլ միայն այն, որ նա այդպես չի հաշվել իրականում։ Իսկ ժամանակը կարելի է հաշվել ուղած դեպքից կամ իրադարձությունից («Դուրգենի ոտը կոտրելու տարին...» կամ «Հիտլերյան Գերմանիայի դեմ տարած հաղթանակից 20 տարի անց...» և այլն) ու, իհարկե, նաև Ալեքսանդրի տարեթվերից (մահվան[10], գահակալման կամ այլ, թեև դրանցից ոչ մեկը չի դարձել հատուկ էրայի սկզբնատարի)։ Եվ ոչ միայն կարելի է, այլև հայտնի են այդպիսի օրինակներ, որոնք մասամբ բերված են Հ. Տաշյանի վերոհիշյալ աշխատության մեջ։ Տաշյանը չի վախեցել նման՝ իր տեսակետի համար «վարկաբեկիչ» օրինակներից։

Իսկ ի՞նչ է հակադրել Շահինյանը այս բոլորին։ Ոչի՜նչ։ Նա պարզապես լռության է մատնել սելևկյան էրայի սկզբնատարին Ալեքսանդր Մակեդոնացու անվամբ կոչվելու երևույթն իսկ, հույսը դնելով ընթերցողի անտեղյակության վրա ամբողջությամբ շրջանցել է իր տեսակետը նեղծանող այս հանգամանքը և իր ջանքերն ուղղել դեպի մանր-մունր խոչընդոտների հաղթահարումը (էջ 157—159)։

Ահա թե ինչպես է ներկայացվում ընթերցողին Սեն-Մարտենի մեղ արդեն ծանոթ տեսակետը։ Սեն-Մարտենի «ենթադրությամբ,—գրում է Լ. Շահինյանը,—«յետ վաթսուն ամի մահուանն Ալեքսանդրի» միտքը չպետք է հասկանալ Ալեքսանդր Մակեդոնացու մահվանից անմիջապես հետո, այլ նրա մահվանից 12 տարի անց, այն է՝ 312 թ. (մ. թ. ա.)» (էջ 157)։ Եվ ուրիշ ոչինչ։ Մի՞թե սա Սեն-Մարտենն է։ Իսկ Հակոբոս Տաշյանի տեսակետը, որ շարադրված է նրա աշխատության 10 մեծադիր կամ 33 փոքր էջերի վրա, նույնիսկ վերոհիշյալ ձևով է։ Հանդես չի եկել Շահինյանի հոդվածներում։ Մենք այնտեղից միայն իմանում ենք, որ Տաշյանը այս հարցում «խիստ քննադատության, անգամ՝ հեգնանքի» է ենթարկել Գարագաշյանին և Խալաթյանին, և այդ կապակցությամբ է միայն, որ տողատակում վկայակոչված է Տաշյանի աշխատությունը (էջ 156, ծան. 4)։

Դառնանք այժմ Լ. Շահինյանի՝ իր տեսակետի օգտին բերած փաստարկներին։ Նա մեծագույն սպասելիքներ ունի այն հանգամանքից, որ Խորենացու միջնադարյան հետևորդները մեկը մյուսի ետևից կրկնում են նրա «յետ վաթսուն ամի...» և սրան հարող մյուս հաղորդումները։ Լ. Շահինյանը թվարկում է ութ այդպիսի հեղինակներ՝ Ասողիկ, Թովմա Արծրունի, Վարդան Բարձրաբերդցի, XIII դարի Անանուն ժամանակագիր, XVII դարի Անանուն ժամանակագիր, Հովհաննես Դրասխանակերտցի, Ս. Անեցի, Դավիթ Բաղիշեցի։ Բայց չէ՞ որ եթե ութի փոխարեն լիներ ութսուն կամ ութ հարյուր օրինակ, դարձյալ դրանից Խորենացու հաղորդածի և թված հեղինակների ընդօրինակածի իմաստը, բովանդակությունը չէր փոխվի, իսկ մենք տեսանք, թե որն է դրա բուն իմաստն ու բովանդակությունը։ Սրանց համար դեռ ավելի դյուրին է եղել Ալեքսանդրի մահվան տարեթվի հարցում Եվսեբիոսին չհետևելը, քանի որ նրանց ուղեցույց է ծառայել այնպիսի հեղինակավոր աղբյուր, որպիսին էր Խորենացու երկը։

---

[10] Տե՛ս P. V. Neugebauer, ուշ. աշխ., էջ 22, 27։

Նույն նպատակով բերվում է նաև Սեբեոսի «Պատմության» կից մեղ հասած հատվածի Անանուն հեղինակի օրինակը, որին Լ. Շահինյանը իրավացիորեն դիտում է իբրև Խորենացուն զուգահեռ այլ՝ ոչ հետևորդ։ Բայց դրանով ցուցադրվում է միայն, որ Անանունը նույն ձևով է մտածել, ինչպես Խորենացին։ Նշենք, սակայն, որ Անանունի օրինակը շատ կարևոր է դտնվելու այլ առումով՝ Խորենացու այս հաղորդման կոնկրետ ակունքները որոնելիս։

Ավելի հետաքրքրական է Սասվել Անեցու օրինակը (և, Լ. Շահինյանի ասելով, սրա տվյալները հարաղատորեն ընդօրինակած Ներսես Պալիենցի)[41]։ Սա, ի տարբերություն Խորենացու մյուս հետևորդների, շրջանցում է Խորենացու «յետ վաթսուն ամի...» արտահայտությունն ու, միևնույն ժամանակ, նշում Ալեքսանդրի մահվան և Սելևկոսի դահակալության միջև անցած 12 տարին։ Լ. Շահինյանը ճիշտ է նկատել այս հանդամանքը և նույնիսկ ճիշտ ուղղություն բռնել նրա բացատրման հարցում, թե այստեղ Սամվել Անեցին Եվսեբիոսով ուղղում է Խորենացուն։ Սակայն Շահինյանը, իր սխալ ելակետի մեղքով, չի կարողացել ճիշտ դնահատել ուղղման իմաստը, որը, անշուշտ, Ալեքսանդրի մահվան տարեթիվը իր օրինական տեղը դնելու մեջ է։

Այլ տիպի մի փաստարկ, որը հիմնավոր լինելու դեպքում կդառնար Լ. Շահինյանի միակ իսկական փաստարկը։ Ասողիկը հայտնում է, որ պարթևների ապստամբությունը տեղի է ունեցել Պտղոմեոս Փիլադելփոսի 30-րդ տարում։ Սրանով այդ իրադարձությունն ընկնում է մ. թ. ա. շուրջ 253 թ. վրա, նշում է Շահինյանը, բայց եթե 30-ը սրբագրենք-դարձնենք 20, ապա Ասողիկի վկայությունը ցույց կտա բաղձալի 263 թ.։ Ինչո՞վ է հիմնավորվում այս սրբագրությունը։ Նրանով, որ եթե պարթևների ապստամբությունը դնենք 263-ին, ապա Ասողիկի 30-ը պետք է դարձնել 20։ Եթե մեկը չհավատա, որ այդ է հիմնավորումը, թող նայի «Հանդեսի» հիշատակված համարի 163 և 164 էջերը։ Փաստարկները «քանի դնում, ուժեղանում են»։ Անցնենք երրորդին, որը և վերջինն է։

Խորենացին Սելևկոսին, ինչպես հայտնի է, տալիս է 31 տարի, իսկ Անանունը՝ 32։ Ինչո՞վ բացատրել այս։ Նրանով, ասում է Լ. Շահինյանը, որ իր ենթադրությամբ, Անանունն իր հաշիվն սկսում է հենց Ալեքսանդրի մահվան տարեթվից՝ 323-ից, իսկ Խորենացին՝ դրա հաջորդ տարվանից՝ 322-ից։ Նրբերանգներ այնտեղ, ուր դեռ չկա ինքը՝ պատկերը։

Այստեղ արդեն կարելի է հանրագումարի բերել Լ. Շահինյանի հիմնավորումը, որովհետև այն խնդիրը, որ դեռ մնաց քննարկելու, առանձին ցուցադրման է արժանի։ Հիմնավորումը, ինչպես տեսնում ենք, տեղի չի ունեցել։ Շահինյանը չի հերքել իր կողմից վիճարկվող տեսակետի հիմնական փաստարկը, այլ շրջանցել է այն, ցուցաբերելով դիտական անբարեխղճություն։ Իր սեփական փաստարկներն էլ ոչ մի քայլ չեն մոտեցրել նրան իր դրույթի հաստատմանը։

Այժմ անցնենք նոր ակնարկված խնդրին։

Հայտնի է, որ Սելևկոսի 32-ամյա գահակալությունը սկսվել է 312,311 թ., այն պահից, երբ նա հանդիսավոր կերպով մուտք գործեց իր վերագրաված Բաբելոնը, և ավարտվել 280 թ.՝ Պտղոմեոս Կերավնոսի դաշույնի հարվածով։

---

[41] Անտեղի է այս շարքը դասել Միքայել Ասորուն, քանի որ նա Խորենացու հետևորդների թվին չի պատկանում, և նույնքան անտեղի է, թեև այլ պատճառներով, այս շարքը մտցնել նաև Մովսես Կաղանկատվացուն, ինչպես անում է Շահինյանը։

Հայտնի է, որ Սելևկոսին 280 թ. փոխարինել է նրա որդի Անտիոքոս Ա Սոտերը, սրան էլ՝ 261 թ.՝ Անտիոքոս Բ Թեոսը։

Սա ժամանակի պատմական իրականության մայրուղին է, ուստի և լուսավորված է անթիվ ու բազմապիսի աղբյուրներով, որոնց մեջ պատմա-ժամանակագրական երկերի կողքին մեծ տեղ են գրավում վավերագրական, իրերին ժամանակակից աղբյուրները՝ հիշյալ թագավորների թվագրված վիմական արձանագրություններն ու դրամները, բաբելոնյան քաղաքներում այդ ժամանակ կնքված մասնավոր գործարքների սեպագիր դրանցումները՝ կավե սալիկների վրա, որոնց թվագրության մեջ հիշատակված է ոչ միայն իշխող թագավորի անունն ու սելևկյան էրայի տարեթիվը, այլև գործարքի կնքման ամիսն ու օրը (հանգամանք, որը հնարավորություն է ընձեռում մանրակրկիտ հետևելու Սելևկյանների գահի վրա կատարված փոփոխություններին)[42]։ Այսպիսով, սրանց տարեթվերը վերանայման անենթակա ճշմարտություններ են։

Բայց ի՞նչ անենք, եթե Լ. Շահինյանին ծայրահեղ անհրաժեշտ է, որպեսզի ըստ Խորենացու Սելևկոսի գահակալությունը 311—281 թթ. փոխարեն ընկնի 322—292 թթ. վրա, Անտիոքոս Ա-ինը 280—261 թթ. փոխարեն՝ 291—273 թթ. վրա և այլն, մինչդեռ այդ պնդման համար նա չի կարողանում այնպիսի հիմք գտնել, որը կարող էր Խորենացուն դրդել կատարելու այդ տեղաշարժը։ Լ. Շահինյանը պատշաճ ելք է գտնում՝ սասանել, վարկաբեկել իրական պատմական ժամանակագրությունը, որպեսզի ասպարեզը մնա իր՝ Խորենացուն պարտադրած ժամանակագրությանը։

Առաջին քայլն այն է լինում, որ նա վերոհիշյալ ճշմարտությունները հայտարարում է սոսկ Եվսեբիոս Կեսարացուն պատկանող թվեր, իբրև թե դրանք սոսկ մի հեղինակի՝ Եվսեբիոսի հաղորդած տեղեկություններն են, պարզապես նրա տեսակետը, կարծիքը Սելևկյանների ժամանակագրության մասին, ուստի և կարող են սխալ լինել։ Սա ընթերցողին ապակողմնորոշող պնդում է, որովհետև Եվսեբիոսը այդ տեղեկությունները հաղորդող բազմաթիվ (նույն թվում և, ինչպես ասվեց, վավերագրական) աղբյուրներից մեկն է միայն։

Երկրորդ քայլով Շահինյանը ջանում է Խորենացու վզին փաթաթած իր այդ ժամանակագրությունը պարտադրել նաև իրական համաշխարհային պատմությանը, այսինքն փորձում արդեն ոչ միայն Խորենացու մոտ, այլև իրականում Սելևկոսին մահացնել 291 թ., Կուրուպեդիոնի տակ Լիսիմաքոսի դեմ նրա շահած նշանավոր հաղթանակից 10 տարի առաջ և այլն, և այլն։

Այդ արտառոց քայլի համար Լ. Շահինյանը իրեն որպես օժանդակ կավան է փորձում ծառայեցնել այն հայտնի փաստը, որ Սելևկոսը շուրջ 10 տարի իշխել է դեռևս իր 32-ամյա պաշտոնական թագավորությունից առաջ, Առաջավոր Ասիայի որոշ շրջաններում։ Այս մասին հաղորդում են և՛ Եվսեբիոսը, և՛ ուրիշ աղբյուրներ։ Եվ ահա Լ. Շահինյանը հարց է հարուցում, թե արդյո՞ք ճիշտ է, որ այդ տարիները եղել են 32 տարվանից առաջ, և ավելի ճիշտ չի՞ լինի մտցնել դրանք 32 տարվա մեջ, և ինչո՞ւ պետք է Սելևկոսը չհաշվեր դրանք իր գահատարիների մեջ և այլն, և այլն։ Այս զվարճալի հարցադրումները նա նույնիսկ ձևա-

[42] Վերջերս գտնվել է նույնիսկ մի սեպագիր սելևկյան արքայացանկ, որտեղ արքաների գահակալման ու մահվան ժամկետները նշված են տարիներով, ամիսներով և օրերով, ինչպես և նշված է յուրաքանչյուրի գահատարիքը։ Տե՛ս A. J. Sachs and D. J. Wiseman, A Babylonian King List of the Hellenistic Period, „Iraq", 1954, XVI, 2, էջ 202 և հտ.։

կերպում է 5 կետերի մեջ, որոնց ամենևին չբողարկված նպատակն է հիմնավորել պատմական պրոցեսի այդ «շտկումը»[43]։ Այսպիսի վախճան ունի Լ. Շահինյանի արմատական առաջարկներից երրորդը և վերջինը։

* * *

Այժմ տեսնենք, թե ինչ է անում նա Խորենացու ժամանակագրության երկրորդ՝ Քրիստոսի ծննդյան տարեթվից այս կողմն ընկած հատվածի կապակցությամբ։ Պատկերը հիմնովին փոխվում է. աղյուսակի կուռ սինքրոնիզմը, որի երկու՝ հայկական ու պարթևական շարքերին այստեղ ավելանում են ևս երկուսը՝ հռոմեականն ու հայոց կաթողիկոսներինը, անհնարին է դարձնում անձնական ճաշակի այն դրսևորումները, որոնց վկա եղանք նախորդ հատվածը քննարկելիս։ Եթե այնտեղ փորձերը տասնամյակների հավելման ու փոփոխման հետ էին կապված, ապա այստեղ՝ միայն առանձին տարիների, որոնց փոփոխությունը, ճիշտ ասած, էական նշանակություն էլ չունի համակարգի վթարման տեսակետից։ Սակայն դրանք ևս պետք է աչքի անցկացնել, որովհետև իրենց իրագործման մեթոդի տեսակետից այս մանր փոփոխությունները քիչ են տարբերվում այն խոշորներից։

Առաջին իսկ հայացքից զարմանք է պատճառում մի հանգամանք։ Լ. Շահինյանի կազմած աղյուսակում այս հատվածի ելակետը նույնն է, ինչ որ մեր կազմածում, այն է՝ Քրիստոսի ծննդյան տարեթիվը, որն ընկնում է Աբգար թագավորի 2-րդ տարվա վրա։ Նույնն են և հայկական շարքի իշխողների գահատարիները՝ մեկ բացառությամբ՝ Երվանդին Շահինյանի մոտ տրված է 20 տարի, մեր կազմած աղյուսակի 21-ի դիմաց (Շահինյանի արած բոլոր ինքնուրույն առաջարկների մեջ սա միակն է, որ որոշ չափով հիմնավորված է և մտածելու տեղ է տալիս)։ Նույնն է և եզրափակիչ կետը՝ Սահակ Պարթևի մահվան տարեթիվը՝ Հազկերտ Բ-ի 1-ին տարում։ Սակայն տարօրինակաբար տարբեր է հանրագումարը, և ոչ թե 1 տարով, ինչպես կսպասվեր Երվանդի գահատարիքի մեկ տարվա տարբերության պատճառով, այլ ամբողջ 3 տարով։ Շահինյանի հանրագումարն է 459, մերը՝ 462։ Ուրեմն, սոսկ թվաբանական սխալներ կան կատարված մեկ կամ մյուս հաշիվներում։ Քանի որ նույն 3 տարվա տարբերությունը նկատվում է 459-ից դեպի ետ՝ բոլոր տարեթվերում, ընդհուպ մինչև Տրդատի գահակալման տարին (Շահինյանի մոտ՝ 285, ինձ մոտ՝ 288), իսկ այնուհետև միայն սկսում է նվազել, ապա պարզ է, որ սխալները կատարված են դրանից առաջ՝ Քրիստոսի ծննդից մինչև Տրդատ հատվածում։

Հաշվենք գահատարիները՝ վերցնելով դրանք Լ. Շահինյանի աղյուսակից.

Արդարի գահատարիները՝ սկսած իր 38-ամյա թագավորության երկրորդ տարվանից (որը համընկնում է Քրիստոսի ծննդյան տարեթվի հետ)՝ 37, Սա-

---

43 Նշենք միայն առաջին կետը՝ նմուշի համար. եթե Սելևկոսը դատում է Լ. Շահինյանը, թագավորած լիներ 32 տարուց ավելի, ապա «ինչը կխանգարեր նրան, որ մինչև պաշտոնապես թագավոր հռչակվելը իրականում թագավորած տարիներն էլ գումարեր իր թագավորության տարեքանակին։ Այլ բան է արդեն, եթե 32-ամյա թագավորությունից բացի տեղեկություն լիներ նրա 44-ամյա թագավորության մասին, սակայն այդպիսի տեղեկություն մեզ հայտնի ոչ մի սկզբնաղբյուր չի արձանագրում...» (էջ 169)։ Հայտնի չէ, թե ում նկատի ունի Լ. Շահինյանը՝ «մեզ» ասելով, սակայն բոլոր՝ Սելևկյանների պատմությանը փոքր ի չատե տեղյակ անձանց ծանոթ է թեկուզ Ապպիանոսի այն հաղորդումը, որ Սելևկոսը թագավորել է 42 տարի, ապրելով ընդամենը 73 տարի (App., Syr., 63)։

նատրուկ՝ 30, Երվանդ՝ 20, Արտաշես՝ 41, Տիրան՝ 21, Տիգրան՝ 42, Վաղարշ 20, Խոսրով՝ 48, անիշխանություն՝ 27, Տրդատի 1-ին տարին՝ 1։ Հանրագումարը՝ 287։

Ուրեմն թվաբանական ճիշտ գործողության դեպքում Տրդատի գահակալման տարեթիվը Լ. Շահինյանի աղյուսակում պետք է ընկներ ոչ թե 285-ի վրա, ինչպես կա, այլ 287 թվականի վրա, և բոլոր հաջորդ թվերը մինչև աղյուսակի վերջը երկուսով ավելի պիտի լինեին, եգրափակիչ թիվն էլ պետք է լիներ 461, 459-ի փոխարեն։

Որտե՞ղ են թաքնված սխալները։ Չշարչարենք ընթերցողին, ստիպելով նրան համեմատել բերված գումարելիները Լ. Շահինյանի աղյուսակի ընթացքի հետ, և նշենք, որ դրանցից առաջինը Աբգարի գահատարիների մեջ է թաքնված։ Աբգարի իշխած 38 տարվանից Քրիստոսի ծննդից այն կողմ է մնում միայն 1 տարի, որովհետև Քրիստոսը ըստ Խորենացու ծնվել է Աբգարի 2-րդ տարում (հանգամանք, որ ընդունում է Լ. Շահինյանը), ուրեմն այս կողմն էլ պիտի ընկներ մնացած 37 տարին։ Աղյուսակում, սակայն, մի տարին կորչում է՝ Աբգարին Քրիստոսի ծննդից այս կողմ մնում է միայն 36 տարի, որովհետև 37-րդ տարում արդեն թագավորում է նրա հաջորդ Սանատրուկը։ Մյուս սխալը անիշխանության տևողության մեջ է, որը Լ. Շահինյանի արձանագրած 27 տարվա փոխարեն նրա աղյուսակում տևում է 26 տարի, որովհետև 27-րդ տարում արդեն թագավորում է Տրդատը։

Այս սխալները տարօրինակ են նախ այն պատճառով, որ Լ. Շահինյանը իր աղյուսակի մնացած մասերը ճիշտ է հաշվել[14], ապա և այնու, որ մի շարքում կատարված նման սխալների դեպքում Խորենացու ժամանակագրության մյուս շարքերը իսկույն ահազանգում են ներդաշնակության կորստյամբ։

Այս դեպքում, սակայն, ահազանգը լռեցվել է այն բանով, որ հայկական շարքում թույլ տրված սխալների արդյունքը՝ երկու տարվա կրճատումը տեղափոխվել է նաև պարթևական շարքը։ Այսպես, մի դեպքում Աբգարի ժամանակակից պարթև Արշավիրը հանգույն Աբգարի կորցրել է իր գահատարիներից մեկը և իշխում է աղյուսակում ընդամենը 45 տարի, իրեն հասնող (և աղյուսակում նրա անվան դիմաց արձանագրված) 46 տարվա փոխարեն (Ք. ծ. առաջ՝ 20 տարի + Ք. ծ. հետո՝ 25 տարի = 45 տարվա։ Ք. ծ. հետո 26-րդ տարվանից թագավորում է Արշավիրի հաջորդը)։ Երկրորդ սխալի բախտը առաջին հայացքից բերել է։ Անիշխանության 27 տարիներից մեկի կորուստը պարթևական շարքում հավասարակշռվել է այն հանգամանքով, որ Պերոզ արքայի համար Խորենացու երկի ձեռագրերում 34 տարվա կողքին կա և 33 տարընթերցվածը (դ և դ նիշերի շփոթման արդյունք), որը և ներմուծվել է աղյուսակի մեջ։ Սակայն այդ տարընթերցվածը ներմուծվել է այն գնով, որ առանց որևէ հիմքի (եթե այդպիսի հիմք չհամարենք տարընթերցվածի ներմուծման դրդապատճառը՝ հայոց շարքում թույլ տրված թվաբանական սխալը) «սրբագրվել» է խո-

[14] Օրինակ, թվաբանական տեսակետից միանգամայն ճիշտ է հաշված հայոց թագավորների գահատարիների գումարը՝ Քրիստոսի ծննդից առաջ. Արգար 1 տարի + Արշամ 20 + անիշխանություն 10 + Արտավազդ 10 + Տիգրան 33 + Արտաշես 25 + Արշակ 13 + Վաղարշակ 22 = 134. և իսկապես, Վաղարշակի գահակալման տարին է աղյուսակում Ք. ծ. ա. 134 թվականը։ Կամ մի ուրիշը։ Հայոց կաթողիկոսների իշխանությունը սկսվել է, ըստ աղյուսակի, 301 թվականին և տևել մինչև 459 թվականը, այսինքն՝ 159 տարի։ Իսկապես, նրանց տարիների գումարը 159 է (= Գրիգոր Լուսավորիչ 30 + Արիստակես 7 + Վրթանես 15 + Հուսիկ 6 + Փառներսեհ 4 + Ներսես 34 + Շահակ 3 + Զավեն 4 + Ասպուրակես 5 + Սահակ Պարթև 51)։

ռենացու մի այլ ցուցում, թե հայոց Վաղարշը թագավորել է պարթև Վաղարշի 32-րդ տարվանից (դարձվել է 33)։

Ինչևիցե, նշված սխալները, եթե, ինչպես ասվեց, անվնաս են Խորենացու համակարգի ընդհանուր պատկերի վիճարման առումով, ապա բավական թանկ են նստում իրեն՝ Լ. Շահինյանին, որը նրանց մասնակցությամբ ստացված ու, հետևաբար, Խորենացուն չպատկանող մի շարք տարեթվերի՝ Խոսրովի սպանության, Տրդատի գահակալման, մի քանի կայսրների գահակալման և այլն, երկար ու բարակ հիմնավորումներ է տվել Խորենացու երկի սահմաններից դուրս գտնվող նյութի ներգրավմամբ։ Այժմ նրան անհրաժեշտ կլինի այդ հիմնավորումները համապատասխանաբար վերակառուցել։

Սրանով էլ ավարտվում է Շահինյանի կողմից արված առաջարկների և փոփոխումների քննարկումը, որոնց հիման վրա նա կատարել է Խորենացու համակարգի վերականգնման իր փորձը[45]։

Իր հոդվածի վերջին երկու էջերը Լ. Շահինյանը զբաղեցրել է Խորենացուց քաղված 16 օրինակներով, որոնք բերված են որպես վերջնական ապացույց իր վերականգնած աղյուսակի հարազատության՝ «Հայոց պատմության» շարադրանքին, այն բանի, թե հենց այդ աղյուսակն է ընկած «Հայոց պատմության» երկրորդ և երրորդ դրքերի շարադրանքի հիմքում։

Դրանք սկսվում են հայոց Արշամ թագավորից և շարունակվում մինչև Խորենացու ժամանակագրության վերջը, այսինքն ծայրեծայր վերաբերում են նրա ժամանակագրության միայն ու միայն երկրորդ հատվածին, որի նկատմամբ Լ. Շահինյանը, ինչպես տեսանք, ոչ մի էական, արմատական առաջարկ կամ սրբագրություն չի արել։ Հարց է ծագում, թե էլ ի՞նչ կարիք կար բերելու այդ օրինակները, որոնք ոչինչ չեն ապացուցում, բացի նրանից, որ այնտեղ, ուր Խորենացուն հանգիստ են թողնում, չեն բռնանում նրա վրա, այնտեղ Խորենացին լրիվ հարազատ է մնում ինքն իրեն, այսինքն՝ նրա ժամանակագրական համակարգը այդտեղ 100 տոկոսով համապատասխանում է դեպքերի իր նկարագրությանը։

Որպես ապացույց այդ հանգամանքի նշենք, որ Շահինյանի բերած բոլոր 16 օրինակները որքան համերաշխ են իր կազմած աղյուսակին, նույնքան հաջողությամբ ծառայում են նաև մեր գրքում ներկայացված Խորենացու ժամանակագրական աղյուսակին, որի մասին Շահինյանն այն կարծիքին է, թե այն «քննություն չի բռնում Խորենացու համաժամանակագրական վկայություններով ու պատմա-ժամանակագրական տեղեկություններով» (էջ 23)[46]։

---

45 Մի քանի սրբագրություններ էլ արված են առանց Լ. Շահինյանից առաջ գրանք առաջարկած հեղինակների հիշատակման. գլանցից են՝ Արշակ Մեծ՝ 52 տարի՝ 53-ի փոխարեն (Ի. Ավդալբեգյան), Արշանակ՝ 32՝ 31-ի փոխարեն և Արշակ՝ 17՝ 19-ի փոխարեն (երկուսն էլ Ն. Ադոնց), Վարազդատի գահակալման տարին՝ Շապուհ Բ-ի 56-րդ տարին՝ 55-ի կամ 57-ի փոխարեն (Գ. Սարգսյան)։ Լ. Շահինյանին է պատկանում Ասպուրակես և Զավեն կաթողիկոսների գահատարիների սրբագրումը։ Հենվելով նրանց գահատարիների քանակությունն արտահայտող թվերի վրա, նա սրբագրել է սինքրոնացնող ցուցումների թվերը։ Մեզ մոտ հակառակն է արված՝ հիմք են ընդունված սինքրոնացնող ցուցումների թվերը և սրբագրված՝ գահատարիները։ Հարցը կարելի է վիճելի համարել, բայց համակարգի ընդհանուր պատկերի համար այս հարցի այս կամ այն լուծումը բացարձակապես ոչ մի նշանակություն չունի։

46 Այսուհանդերձ, Շահինյանին, այսպիսով, մինչև այժմ չի հաջողվում մեր վերականգնած աղյուսակի որևէ կետի և Խորենացու «Պատմության» շարադրանքի (իհարկե, բուն շարադրանքի, ե ոչ թե նրան Շահինյանի տված մեկնության) միջև եղած հակասության գոնե մի օրինակ բերել։

Այդ 16 օրինակների փոխարեն նա արդեն պարտավոր էր բերել ուրիշ օրինակներ Խորենացու ժամանակագրության այն առաջին հատվածից, որը դարձել է նրա էական ու արմատական առաջարկների ու սրբագրությունների ասպարեզ։ Պիտի բերեր, որպեսզի ցույց տար ընթերցողին, թե չնայած իր կատարած այդ փոփոխություններին, որոնց նա տալիս է «վերականգնում» անվանումը, Խորենացու շարադրանքի սինքրոնիզմը չի խախտվել, որ այն անձինք, որոնք ժամանակակից են ըստ Խորենացու շարադրանքի, ժամանակակիցներ են մնում նաև իր վերականգնած աղյուսակում։ Այդ չի արել Լ. Շահինյանը և չէր կարող անել այն պարզ պատճառով, որ Խորենացու շարադրանքի և Շահինյանի աղյուսակի այդ հատվածի մեջ համաձայնություն չկա, ինչպես համոզվեցինք վերը (էջ 124 և հտ.)։

Այժմ մի վերջին խնդիր։ Լ. Շահինյանի քննարկվող հոդվածը նվիրված է Խորենացու ժամանակագրական համակարգի վերականգնմանը, իսկ այդ վերականգնած համակարգի մեկնաբանումը նա համարում է իր հաջորդ խնդիրը (տե՛ս հոդվածի վերջին պարբերությունը)։ Այսուհանդերձ, նրա այդ հոդվածում էլ կան մեկնաբանման որոշ տարրեր, որոնց կողքից հնարավոր չէ անցնել։

Մեկնաբանման փորձերից մեկին մենք մանրամասն ծանոթացանք. Շահինյանը Խորենացու աղյուսակում առաջին Սելևկյաններին իրենց թագավորած ժամանակից 12 տարով արհեստականորեն դեպի ետ տեղաշարժելով (այս դեռ վերականգնումն էր), չէր վարանում հավատացնել ընթերցողին, թե իրական պատմությունը հենց այդպես էլ ընթացել է (այս էլ՝ մեկնաբանումը)։

Այստեղ անենք երրորդ և վերջին դիտողությունը նրա քննադատական հոդվածի կապակցությամբ։ Վերջին էջերում Շահինյանը քննարկում է մեր, այսպես կոչված, «կովանների տեսությունը»։ Թե ինչ տեսություն է այդ, երևում է գրքից բերվող հետևյալ հատվածից, որը մեջ է բերված նաև Շահինյանի մոտ. Խորենացին «իր նյութի ամբողջ բաղմաղանության մեջ ընտրում է այնպիսի ծանրակշիռ փաստերի մի շարք, որոնք նրան միանգամայն հավաստի են թվում, և դրանք անաղարտ պահելով՝ դարձնում իր շարադրանքի առանցք, նշանաձող, կովան։ Մնացած նյութը նա ստորադասում, ենթարկում է այդ կովաններին, տալով նրան համապատասխան մշակում» (էջ 131)։ Շահինյանը մերժում է այս դրույթը, մերժում ոչ միայն իմ այդ գտած կովանները (դա դեռ ոչինչ), այլև ընդհանրապես կովանների առկայության փաստը Խորենացու աշխատանքում (սա արդեն վատ է)։ «...Խորենացու համար.— գրում է նա,— իր ավանդած բոլոր գահատարիները ավասարազոր նշանակություն են ունեցել, ...Խորենացին ոչ մեկը չի ստորադասել մյուսին» (էջ 135)։ Դժբախտաբար Լ. Շահինյանը չի ըմբռնել «կովանների տեսության» բուն իմաստը. այն վերաբերում է ոչ թե Խորենացու «ավանդած գահատարիներին», ինչպես կարծում է ինքը, այլ Խորենացու կողմից իր ձեռքի տակ եղած նյութի ընտրության, դասակարգման և մշակման խնդրին. այն խնդրին, թե որտեղի՞ց է ձեռք բերել Խորենացին այդ տվյալները, որոնք հետո ավանդել է մեզ։ Շահինյանի հոդվածները կարդացողի համար մի բան, համենայն դեպս, պարզ է դառնում, որ Խորենացու աղբյուրագիտական բազայի պրոբլեմը, այն պրոբլեմը, թե իր ապրած V դարում Խորենացին ինչպիսի և որքան ինֆորմացիա կարող էր ունենալ իրենից 2000, 1000, 500, նույնիսկ 200 տարի առաջ տեղի ունեցած՝ հայոց պատմության իրողությունների մասին, այդ պրոբլեմը պարզապես գոյություն չունի Շահինյանի համար։ Այդ հարցում նրա հիմքը այն դրույթն է, թե Խորենացին «իշատակում, անվանում է իր աղբյուրները։ Այո, անվանում է, բայց գաղտնիք չէ, որ թեև այդ աղբյուրները արդեն 1500 տարի է, ինչ անվանված են, այնուամենայնիվ Խորենացու աղբյուրագիտական բազայի խնդիրը, չնայած հարյուրավոր ուսումնասիրություններին, մնում է մութ, մնում է Խորենացիագիտության պրոբլեմ համար մեկ։

Խորենացին անընդհատ զանգատվում է աղբյուրների սղությունից, նախնիների անիմաստասիրությունից և այդ զանգատը իր արձագանքն է գտնում ժամանակագրության այն խիստ անմխիթար վիճակի մեջ, որ տեսնում ենք V դարի պատմագրական երկերում՝ Ագաթանգեղոսի, Փավստոսի մոտ և այլուր։ Այս պայմաններում ինչպե՞ս բացատրել Խորենացու, թեև որոշ ուրույն շեղումներ ունեցող, բայց, համենայն դեպս, ներքուստ անթերի, թվերով ծայրեիծայր օժտված ու

Շատ ու շատ ցավալի կլիներ, եթե Շահինյանն իր մեկնաբանությունը շարունակեր այս նույն ուղիով։ Դժբախտաբար, որոշ պարզ նշաններ կան, որ նա հենց այդպես էլ մտադիր է գործելու։ Ահա մի քանի տող քննարկվող հոդվածից. «Այստեղ էլ մեր նպատակը այն բանի ապացուցումը չէր, թե պարսից Արշակունիների վախճանի, հետևաբար Սասանյան հարստության հիմնադրման համար որ թվականն է ընդունելի՝ 226-ը, ինչպես ընդունված է, թե 245-ը, ինչպես տեսանք Խորենացու և նրան հետևող հեղինակների մոտ. այս հարցին անդրադառնալու ենք առանձին» (էջ 34)։ Անշուշտ, ընթերցողը իրավացիորեն կանխագուշակում է այս խոսքերից, որ դրանց հեղինակը մի օր հանդես է գալու այն պնդմամբ, թե պարթև Արշակունիների բարձումը և Սասանյանների իշխանության գալը տեղի է ունեցել (ոչ միայն ըստ Խորենացու ու նրա հետևողների, որ ամենևին նորություն չէ, այլ պատմականորեն) Փիլիպոս Արաբ կայսեր (244—249 թթ.) օրոք, իրականից երկու տասնյակ տարի ավելի ուշ։ Սրանից բխում է, ի դեպ, որ նա մտադիր է «վերակառուցելու» III—V դարերի ողջ համաշխարհային պատմության ընթացքը ըստ Խորենացու ժամանակագրության այն հիմնական շեղման, որը նկարագրվեց ներկա հոդվածի սկզբում։

Մի այլ տեղ, նշելով, որ Թեոդոս Մեծին Խորենացին տալիս է 24 կամ 25 տարի թագավորություն, Շահինյանը ավելացնում է. «Այլ հարց է արդեն, որ Թեոդոս Մեծի համար պատմագիտության մեջ ընդունված է ընդամենը կայսրության 16-ամյա ժամանակաշրջան» (էջ 49)։ Այստեղից ևս փորձված ընթերցողը կարող է ապագա մի «հայտնություն» կանխատեսել։

Լ. Շահինյանի փայփայած այս ծրագիրը միանգամայն անիրական է։ Դրա պերճախոս վկաներն են այն մեթոդները, որոնցով նա սկսել է «իրագործել» այն։ Խորենացու տվյալների բռնի հարմարեցում, աննպաստ փաստերի «մոռացում», թվաբանական անճշտություններ։ Բացի այդ, ոտնահարվում են այլ աղբյուրների, մանավանդ օտար աղբյուրների տվյալները։ Սխալ ճանապարհի վրա է Լ. Շահինյանը։

քառաշար բարդ սինքրոնիզմով կերտված համակարգի ծնունդը նույն V դարում։ Շահինյանի պատկերացմամբ Խորենացին իր աղբյուրներում գտել է այդ համակարգի բոլոր բաղադրամասերը՝ պատրաստի վիճակում և շարելով դրանք իրար ետևից ու իրար կողքի՝ ստացել իր համակարգը։ Նման պատկերացման մեջ «աղբյուրներ» հասկացությունը ենթանում, վերացական է դառնում, անհունորեն հեռանում իրական աղբյուրների այն նկարագրից, որին մշտ դատիպել ու հանդիպում է պատմաբանը այսօր թե V դարում, այն է՝ փոխադարձ հաստատման հետ մեկտեղ՝ բազմաթիվ հակասական տվյալներ, իրարամերժ տեղեկություններ և միշտ բացեր ու բացեր։ Հետազոտողը, այսօր թե V դարում, կոչված է հաղթահարելու այդ դժվարությունները իր բանականության ուժով և, իհարկե, ստեղծելով աշխատանքի որոշ մեթոդիկա՝ իր կարողության ու դարին համեմատ։ Այս վերջին ճանապարհով է ծնունդ առել, մեր համոզմամբ, և Խորենացու ժամանակագրական համակարգը (մանրամասնությունները զրքում)։

Ավելորդ է կանգ առնել Շահինյանի հոդվածի վերջում 6 կետերով նշված հայտարարությունների վրա, նշենք միայն, որ դրանց մի մասի մեջ, հատկապես Բ կետում, մեր տեսակետը, մեզմ ասած, անհարազատ է ներկայացված։ Ընթերցողը պետք է հիշի, որ խոսքն այդ կետում նույն «կովանների տեսության» մասին է, ինչպես և հիշի, որ Շահինյանի ձեռնարկած ողջ քննադատությունը կառուցված է Խորենացու ժամանակագրական համակարգի՝ իր չկայացած վերականգնման վրա։

О ВОССТАНОВЛЕНИИ ХРОНОЛОГИЧЕСКОЙ СИСТЕМЫ «ИСТОРИИ» ХОРЕНАЦИ

Доктор историч. наук Г. Х. САРКИСЯН

(Резюме)

Попытка восстановления хронологической таблицы Хоренаци, предпринятая Л. Шагиняном, сводится, в сущности, к трем предложениям, которые в своей совокупности преследуют цель приравнять длительность начального отрезка хронологии Хоренаци (от Александра Македонского до года рождества Христова) к длительности соответствующего отрезка достоверной хронологии.

Первое предложение — читать число лет правления четвертого парфянского царя не 30, как имеется во всех дошедших до нас рукописях «Истории» Хоренаци, а 50. Предложение это находится в вопиющем противоречии с повествовательными данными соответствующей главы «Истории», и попытка сгладить его приводит Шагиняна к замене этих данных собственными предположениями. Предложение начисто отпадает, а вместе с ним — независимо от оценки остальных двух предложений — рушится и вся система, построенная Шагиняном и приписанная им Мовсесу Хоренаци.

Вторым предложением предусматривается замена дошедших до нас в рукописях труда Хоренаци чисел лет правления первых двух парфянских царей (соответственно: 31 и 26) числами, сообщаемыми для этих царей одним из последователей Хоренаци историком X—XI вв. Асогиком (соответственно: 57 и 31), в предположении, что в данных последнего сохранился первоначальный облик сообщений Хоренаци. Увлекшись этим предположением, Л. Шагинян совершенно сбросил со счетов ряд препятствий филологического характера, делающих предложенную замену невозможной.

Третье предложение заключается в том, чтобы началом хронологии Хоренаци считать не 312/311 г. до н. э. (год воцарения Селевка I и начала селевкидской эры), как это было принято до сих пор, а 323 г. до н. э. (год смерти Александра Македонского). Шагинян в этом пункте замалчивает основную аргументацию своих предшественников; в то же время его собственная аргументация оказывается абсолютно недоказательной.

Мелкие поправки, предлагаемые Шагиняном ко второму отрезку хронологии Хоренаци (от года рождества Христова), в подавляющем своем большинстве столь же неуместны, сколь и охарактеризованные выше крупные поправки, и реализуются (т. е. вводятся в таблицу) с массой погрешностей.

Причина неудачи автора — в его стремлении подчинить исходные факты полюбившейся ему концепции.